10.57192/18291864-2024.2-67

**Արարատ Մ. Հակոբյան**
*Պատմ. գիտ. դոկտոր*

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ Գ. ՀԵԳԵԼԻ «ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

**Բանալի բառեր** – պատմություն պատմագիտություն, մեթոդաբանություն, քննություն, ուսմունք, բանականություն, պարբերացում, սուբստանցիա, Արևելք, ոգի, ազատություն, բնություն, անհատ, Կեսար, գերմանական աշխարհ:

## Մուտք

Հայաստանի երրորդ հանրապետության երեք տասնամյակներում պատմագիտության զարգացման համար ստեղծվել են քիչ թե շատ նպաստավոր միջավայր ու պայմաններ: Սակայն մեզանում նորը դանդաղ է արմատավորվում. շարունակվում են պահպանվել մարքս-լենինյան մտածելակերպի կաղապարները, չեն նկատվում արդի գիտության եվրոպական չափորոշիչներին մոտենալու ձգտումներ:

Հասկանալի է, որ եթե նախկինում խորհրդային պատմագրության և առհասարակ հայագիտության ու հումանիտար ոլորտի հետազոտողները, ուզեին թե ոչ, պիտի առաջնորդվեին մարքս-լենինյան տեսությամբ (ուսմունքով), մեթոդով ու մեթոդաբանությամբ, ապա անցած երեք տասնամյակներում տակավին չի եղել որոշակի հստակություն, ձևավորված հայեցակարգ, թե հումանիտար ոլորտի գիտաշխատողները գիտատեսական ու

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.06.2024:

մեթոդաբանական ինչպիսի զինանոցով պիտի առաջնորդվեն՝ ստեղծելու արդի գիտության չափանիշներին համապատասխանող հետազոտություններ:

Պատմության տեսության հարցերին անդրադառնալիս հարկ է ուշադրություն դարձնել պատմական երևույթների փիլիսոփայական ընկալմանն ու իմաստավորմանը, դրանցում՝ դիալեկտիկական մեթոդի, էմպիրիզմի տարրերի կիրառմանը, ինչպես, օրինակ, Յոհ. Դրոյզենի, Գ. Հեգելի, Ֆ. Բրոդելի, Ն. Բերդյաևի, Ե. Ֆրանգյանի և մյուսների աշխատություններում: Բացի այդ, պատմության հետազոտման տեսական հարցերից է նրա շարժիչ ուժերի հարցը, որի վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ վարկածներ, ուղղություններ և մոտեցումներ՝ սկսած աստվածաբանական (теологический) մեկնություններից մինչև Գ. Հեգելի՝ համաշխարհային ոգու, Կ. Մարքսի՝ մատերիալիստական տեսություններն ու մոտեցումները:

Այս և պատմափիլիսոփայական բնույթի մնացած հարցերի պատասխանները պետք է փորձել գտնել՝ առաջին հերթին օգտագործելով Եվրոպայի ինտելեկտուալ ձեռքբերումներն ու գիտության արդի չափորոշիչները, միաժամանակ նաև հաշվի առնել, պահպանել ու խորացնել ազգային առողջ ավանդույթներն ու արժեքները:

Պատմության տեսության կտրվածքով հետազոտության կարևոր նյութ կարող է հանդիսանալ ազգային ինքնագիտակցության ու մտածելակերպի փոփոխության գծային շարժընթացի աշխարհաքաղաքական ու սոցիալ-հոգեբանական խթանների քննությունը, քանզի հայ պատմագրության երախտավոր Լեոյի (Առաքել Բաբախանյանի) (1860–1932 թթ.) խոսքերով՝ անհրաժեշտ է, որ հայ «պատմաբանը ճանաչի իր ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը»[1]:

Այժմ հստակություն չկա անգամ այն հարցում, թե մեր երիտասարդ ասպիրանտը, հայցորդը, հետազոտողը տեսական ու մեթոդաբանական ինչ գործիքակազմով են պատրաստում իրենց ատենախոսությունը, եթե, իրոք, իրենց աշխատանքում առաջնորդվել են գիտատեսական ու մեթոդաբանական անհրաժեշտ մոտեցումներով ու չափանիշներով:

Արդ՝ նման քննադատական մուտքից հետո, իբրև խորհրդային պատմագրության ու մտածելակերպին հակադիր, պատմության տեսության ու մեթոդաբանության մի ուշագրավ նմուշ՝ ստորև փորձ է արվում ներկայացնել գերմանական դասական փիլիսոփայության խոշորագույն ներկայացուցիչ Գ. Հեգելի՝ պատմափիլիսոփայությունը, կարծում ենք, ընթերցա-

[1] **Լեո**, Հայկական հարցի վավերագրերը, Եր., ԵՊՀ հրատ., 2014, էջ 3:

սեր հանրությանը և գիտական շրջանակներին կարող է օգտակար լինել պատմության տեսական ու մեթոդաբանական հարցերին իրազեկ ու հասու լինելու և դրանցով առաջնորդվելու տեսակետից:

## 1. Մի քանի տվյալներ Գ. Հեգելի մասին

Հայտնի է, որ **Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելը** (1770–1831 թթ. թողել է գիտական վիթխարի ժառանգություն: Նրա մահվանից հետո Գ. Հեգելի ուսմունքի հիման վրա առաջացել են հեգելական հոսանքներ ու դպրոցներ: Հեգելն ունեցել է բազում հետևորդներ՝ հանդիսանալով փիլիսոփայության մեջ դիալեկտիկական մեթոդի ամենակարկառուն ներկայացուցիչը: Իր գիտափիլիսոփայական հարուստ զինանոցը նա օգտագործել է նաև համաշխարհային պատմության քննության և իմաստավորման նպատակով: Պատմության փիլիսոփայությունից զատ, Հեգելը զբաղվել է բնագիտության, իրավունքի, էսթետիկայի, կրոնի և ոգու փիլիսոփայության, գիտության տրամաբանության և բազում այլ հիմնահարցերով, որոնցում առաջադրված գաղափարները, մտքերն ու ձևակերպումներն ուղեցույց են հանդիսացել ու մինչ օրս կարևոր են գիտական ամենալայն շրջանակների, այդ թվում՝ պատմաբանների համար: Հիշեցնենք, որ Կ. Մարքսը, մեծապես ազդվելով Հեգելի փիլիսոփայությունից, սկզբնական շրջանում հարել է «Երիտասարդ հեգելականների» դպրոցին, որը մեծապես նպաստել է նրա աշխարհայացքի և հետագա մատերիալիստական ուսմունքի ձևավորման գործին: Երիտասարդ հեգելական Կ. Մարքսը Հեգելի դիալեկտիկական տեսությունը տարածեց դասակարգային պայքարի ու հեղափոխությունների վրա:

Պրոֆ. Հեգելը պատմության փիլիսոփայության մասին դասախոսությունների կուրսը կարդացել է Բեռլինի համալսարանում, կյանքի վերջին տարիներին՝ մինչև իր մահը, հինգ ուսումնական տարի, որոշ ընդհատումներով՝ 1822–1831 թթ. միջակայքում: Դասախոսությունների տեքստը գրքի ձևով առաջին անգամ լույս է ընծայվել հետմահու՝ 1837 թ., նրա աշակերտների կողմից[2]: Աշխատության՝ գերմաներենից ռուսերեն թարգմանությունն իրականացրել է փիլիսոփա **Ա. Մ. Վոդենը**: Խորհրդային շրջանում՝ 1935 թվականին այդ աշխատությունը տեղ է գտել Գ. Հեգելի Երկերի ռուսերեն բազմահատոր հրատարակության 8-րդ հատորում «Դասախոսություններ պատմության փիլիսոփայությունից» վերտառությամբ: Իսկ

[2] Տե՛ս **Каримский А. М.**, Философия истории Гегеля, М., изд. МГУ, 1988, էջ 19-20:

2005 թ. այն լույս է տեսել իր նախնական «Դասախոսություններ համաշխարհային պատմության փիլիսոփայությունից» վերտառությամբ: Թեև աշխատությունը համակարգված է՝ բաժանված մասերի, բաժինների, գլուխների, ըստ դարաշրջանների ու պատմաաշխարհագրական միջավայրի, սակայն ամբողջության մեջ երբեմն նկատվում են մտքերի կտրտվածություն, հատվածականություն, անհամամասնություններ: Ըստ իս՝ առավել ամբողջականն ու բարձրարժեքը դասախոսությունների առաջին մասն է, որը վերաբերում է պատմության փիլիսոփայության քննական և խորիմաստ վերլուծությանը[3]: Իսկ մյուս բաժիններն ու գլուխները վերաբերում են համաշխարհային պատմությանը (allgemeine Geschichte) ըստ կոնկրետ տարածաշրջանների ու երկրների՝ ընդհուպ Ֆրանսիական Մեծ հեղափոխությանը[4]: Ժամանակագրական առումով հեղինակը պատմության ակունքները սկսում է Չինաստանից ու Հնդկաստանից և ոչ թե՝ Հին Եգիպտոսից, Անտիկ Հունաստանից ու Հռոմից, ինչպես հաճախ ընդունված է մեզանում: Հեգելն իր այս դասախոսություններում հաջողությամբ փորձ է արել ցույց տալ, որ փիլիսոփայական հասկացություններն ու կատեգորիաները ևս կիրառելի են պատմության համար և հանդիսանում են համաշխարհային պատմության բնական զարգացման միջուկը:

## 2. Հեգելի ընդհանուր դիտարկումները

Հեգելի՝ «Դասախոսություններ պատմության փիլիսոփայությունից» աշխատության 2005 թ. ռուսերեն հրատարակության խմբագրական խորհուրդը գրքի ընդարձակ առաջաբանում այն ընդհանուր ձևակերպումն է տալիս, որ «Հեգելի պատմության փիլիսոփայության ընդհանուր կառուցվածքը անթաքույց նպատակաբանական է (телеологична)»[5]: Այլ խոսքով, ըստ նրա՝ պատմական ոգու և ինքնին իրերի շարժման հոլովույթում, ի վերջո, համաշխարհային պատմության ավարտ (վախճան) կլինի: Նկատենք, որ այս հոռետեսական միտքը այլ ձևակերպմամբ արտահայտել են նաև փիլիսոփաներ **Ն. Բերդյաևը**[6], **Ֆր. Ֆուկույաման**[7] և ուրիշներ՝ ըստ ամենայնի օգտվելով նաև Հեգելի դատողություններից: Դեռևս 1935-ին

---

[3] Տե՛ս **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 57-158.

[4] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 159–455:

[5] **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 31.

[6] Տե՛ս **Բերդյաև Ն**., Պատմության իմաստը, թարգմ. **Դ. Մոսինյանի**, Եր., «ՎՄՎ-պրինտ», 2019, էջ 10–11 և 231:

[7] Տե՛ս **Фукуяма Фр**., Конец истории и последний человек, «Вопросы философии», М., 1990, N 3, с. 144, տե՛ս նաև՝ **Фукуяма Фр**., Конец истории и последний человек, М., изд. «Ермак», 2005, с.97.

լույս տեսած Հեգելի բազմահատորյակի խմբագրակազմը, տալով «Պատմության փիլիսոփայություն» աշխատության ընդհանուր գնահատականը, նշում էր, որ «Հեգելը գրքում փորձել է տալ համաշխարհային պատմության ավարտուն պատկերը (законченную картину всемирной истории), այն հասկանալ որպես աստիճանական շարժման ու զարգացման միասնական գործընթաց՝ ցածր ձևերից դեպի ավելի բարձր և կատարյալ»[8]: Հեգելի ներկայացմամբ՝ յուրաքանչյուր ժողովուրդ, ինչպես և անհատ, ունի իր պատմական կոչումը և, հասնելով իր ոգու զարգացման բարձրակետին, կարելի է ասել՝ աստեղային ժամին, իջնում է պատմության թատերաբեմից՝ իր տեղը զիջելով ուրիշ երկրի, ժողովրդի, պետության[9]:

Հանրահայտ է, որ Հեգելի փիլիսոփայական համակարգին բնորոշ է **դիալեկտիկական մեթոդը**, իսկ մյուս կողմից՝ **օբյեկտիվ իդեալիզմը**, որում գլխավոր դերակատարը հանդիսանում է **Համաշխարհային** կամ **Բացարձակ ոգին**: Ըստ նրա՝ «Համաշխարհային ոգին է պատմության իսկական (բնական) սուբյեկտը»[10]:

Հեգելի ուսմունքում մարդկային գիտակցության մեջ գաղափարը դրսևորվում է որպես **ոգի՝** իր տարբեր ձևերով՝ մարդկային, անհատական, ազգային, բնական, բացարձակ, համաշխարհային և այլն: Համաձայն հեգելյան պատմափիլիսոփայության՝ տեղի է ունենում բանականության միջոցով ոգու զարգացում մի աստիճանից դեպի մյուսը, որն ինքնին ենթադրում է մարդու, ժողովուրդների, լայն առումով՝ աշխարհի առաջընթաց, զարգացում: Պատմության փիլիսոփայության հեգելյան համակարգի (սխեմայի, մտավոր կառույցի) հիմքում ընկած է բանականության միջոցով ազատության գիտակցումն ու ձեռքբերումը, և որ բանականությունն՝ իբրև սուբստանցիա, կառավարում է աշխարհը, առանց որի պատմությունը կվերածվի քաոսի, և որ համաշխարհային պատմության մեջ շրջում ու գործում է **համաշխարհային ոգին**[11]: Հեգելը հղում է անում հույն փիլիսոփա Անաքսագորասին (500–428 թթ. մ. թ. ա.), որ «**Միտքն (voῦs)** (կամ բանականությունն**)** է կառավարում աշխարհը»[12]: Հակառակ դրա՝ գերմանացի փիլիսոփաներից Ա. Շոպենհաուերի մոտ (1788–1860 թթ.) իշխում է անմիտ քաոսը, իսկ Ֆ. Նիցշեի մոտ (1844–1900 թթ.)՝ պատմության կրկնվող շրջապտույտն ու պատմական նիհիլիզմը (պատմության ժխտո-

[8] **Гегель**, Сочинения, т. VIII, М.-Л., 1935, с. VII.
[9] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ), հատ. 6, Եր., 1980, էջ 330:
[10] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 32.
[11] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 41.
[12] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 447.

ղականությունը)[13]: Հեգելը փիլիսոփայական ընկալումով է արձանագրել պատմական չարիքը՝ մարդկային տառապանքների, զոհերի, բռնության և հանցագործությունների գոյության փաստը, որը, իր դիալեկտիկական մեթոդի համաձայն, կարող է համախմբիչ դեր կատարել համաշխարհային ոգու առաջադիմության, մարդկության դիմակայող ձգտումների և ուժերի համախմբման իմաստով՝ կանխելու և հաղթահարելու չարիքը[14]:

## 2.Պատմության հեգելյան պարբերացումը և փիլիսոփայական մեկնությունները

Հեգելը պատմության փիլիսոփայության մասին իր իր դասախոսության մեջ խնդիր է դրել խորհել, քննել ու դատողություններ անել համաշխարհային պատմության մասին: Դրան հասնելու համար նա՝ իբրև հետազոտող, հնարավորինս հավաքել է փաստավավերագիր նյութեր՝ հոգևոր և պատմական փաստեր: Օգտվել է հնդկական **Վեդաներից**, հունահռոմեական փիլիսոփաների և պատմիչների երկերից ու աշխատություններից, այլ սկզբնաղբյուրներից, հուշագրություններից, տարեգրություններից, ճամփորդական նոթերից, գրավոր ու նյութական այլ արժեքներից:

Ակներև է, որ իր փիլիսոփայական հանճարը, մտավոր ներըմբռնումը և պատմավավերագիր նյութերը բավական են եղել, որպեսզի նա փորձի ներկայացնել համաշխարհային պատմությունը, նաև պատմագրությունը՝ հիմնականում՝ փիլիսոփայական կտրվածքով: Պատմության և պատմագրության հարաբերակցության հարցում Հեգելը գրում է, որ «պատմագրությունը ծագում է իսկական իմաստով պատմական իրադարձությունների և գործերի (деяание) հետ միաժամանակ և դրանք ունեն ներքին հիմք, որով և հանդես են գալիս միասին»[15]: Իսկ պատմագրության և պատմագիտության հարաբերակցության հարցում պիտի ասել այն, որ պատմագրական ամեն մի բնույթի երկը կամ աշխատությունը չէ, որ կարելի է դասել գիտականի շարքում: Պատմագրության մեջ շատ են մտքերի խոտանը, փաստերի աղավաղումն ու խեղաթյուրումը, պատմություն շարադրողի կողմնակալությունը և այլն:

Գ. Հեգելը աշխատության բուն ներածականը սկսում է համաշխարհային պատմության պատմագրությանը անդրադարձով: Նա, ըստ պատմական դարաշրջանների (շրջափուլերի), առանձնացնում է պատմության,

---

[13] Քաղված է՝ **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 41.
[14] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 44.
[15] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 109.

պատմագրության, պատմական մտածողության (ճանաչողության) երեք ձև.

ա) նախասկզբնական պատմություն,

բ) ռեֆլեքտիվ կամ ռեֆլեքսիվ (անդրադարձական) պատմություն,

գ) փիլիսոփայական պատմություն[16]:

Հեգելն իր տարբերակած նախասկզբնական պատմության պատմիչ-հեղինակներից մատնանշում է Հերոդոտոսի, Թուկիդիդեսի, Քսենոֆոնի, Պոլիբիուսի, Տակիտոսի և մյուսների անունները, որոնց մոտ ավելի շատ են փաստերի և իրադարձությունների արձանագրումները: Նրա մեկնաբանությամբ՝ հիշյալ պատմաբանները նկարագրում են գերազանցապես իրենց աչքի առջև կատարված գործողությունները, իրադարձությունները, իրավիճակները՝ ոգեպես ներթափանցելով դրանց մեջ ու փորձելով պատմիչների արտաքուստ զգացած իրադարձություններին ու երևույթներին տալ բովանդակային պատասխաններ: «Անշուշտ,- գրում է Հեգելը,- այդ նախասկզբնական պատմաբանները օգտվել են ուրիշների հաղորդումներից, պատմածներից, քանզի մեկ մարդ չի կարող տեսնել ամեն ինչ... պատմաբանները տեղի ունեցած երևույթները կապում են մեկ ամբողջության մեջ և դրանք հավերժացնում **Մնեմոզինի** տաճարում»[17]:

Հեգելն իրավացիորեն գտնում է, որ լեգենդները (առասպելները), ժողովրդական երգերը, ավանդապատումները չի կարելի դասել ստույգ պատմության շարքին, քանի որ դրանք դեռ պարզ պատկերացում չեն տալիս չլուսավորված ժողովուրդների մասին: Բացի այդ, ըստ նրա, կրթված ու կուլտուրական պատմաբանը, որոշակի փաստերի վրա կառուցված իր պատմությունը շարադրելիս, կրում է իրար հետ կապված երեք գործոնի ազդեցությունը՝ **հեղինակի ոգին**, տեղի ունեցած պատմական **գործողությունների ոգին** և այն **միջավայրը,** որում շարադրվում է բուն պատմական նյութը (ընդգծումները մերն են – Ա. Հ.)[18]:

Ինչպես ասվեց, Հեգելը պատմության կամ պատմական ճանաչողության երկրորդ ձևը համարել է **ռեֆլեքտիվ** (անդրադարձական), որի պարագայում պատմիչ-պատմաբանը կարող է ներառել ողջ համաշխարհային պատմությունը: Այս դեպքում պատմական նյութը մշակելիս առաջանում է ինչ-որ հակասող բան, այն է՝ պատմական իրադարձության ժամանակաշրջանի ոգին չի համընկնում պատմությունը շարադրողի ոգուն: Եվ

[16] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 57.

[17] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 57 (**Մնեմոզինը** համարվում էր հին հունական առասպելաբանության **հիշողության** աստվածուհին):

[18] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 58.



ՎԻՄ հանրակրթական հանդես, ՀՀ (ՊԲ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

այստեղ կարևորվում է պատմություն գրողի սուբյեկտիվ մոտեցումը, նրա գրելաձևը, կատարման եղանակը, դատողական թե ռեֆլեկտիվ, անգամ՝ ազգային պատկանելությունը[19]:

Իր հերթին, Հեգելը ռեֆլեքտիվ պատմությունը տրոհել է ենթատեսակների, ինչպիսին, օրինակ, **քննական** և **պրագմատիկ** պատմություն և այլն: Քննական պատմության ենթատեսակի պարզաբանման համար նա թվարկում է գերմանացի ականավոր պատմաբանների և գտնում, որ այս մոտեցումը մեծապես կիրառվում է Գերմանիայում: «Այստեղ,– նրա պատկերմամբ,– շարադրվում է ոչ այնքան բուն պատմությունը, որքան պատմության պատմությունը (այսինքն՝ պատմագրությունը – Ա. Հ.), տրվում է պատմության շարադրանքի օբյեկտիվ գնահատականը, հետազոտվում է դրան արժանահավատությունը և ճշմարտացիությունը»[20] և այլն: Այսինքն՝ այստեղ շեշտը դրվում է մատուցվող նյութի հանդեպ քննական վերաբերմունքի վրա:

Ինչ վերաբերում է **պրագմատիկ** պատմությանը, ապա դրա իմաստն այն է, որ թեև պատմական իրադարձությունները տեղի են ունեցել մեզանից հեռավոր անցյալում, սակայն դրանց միջև կա ընդհանուր ու ներքին կապ և, չնայած դրանց աբստրակտ բնույթին՝ պրագմատիկ առումով շատ կողմերով դրանք դառնում են արդիական: Հեգելի մեկնությամբ՝ «անցյալի պատմության ռեֆլեքտիվ շարադրանքի շնորհիվ հագեցվում է այսօրվա կյանքը, և դրա հետաքրքիր ու կենսական լինելը կախված է լինելու իր՝ հեղինակի ոգուց»[21]:

Ռեֆլեկտիվ պատմության այս ենթատեսակի հետ կապված՝ Հեգելն անդրադառնում է պատմության մեթոդաբանության մեջ շատ քննարկվող մի հարցի՝ պատմական իրադարձությունների կրկնելիության խնդրին: Այս առումով հետաքրքիր է նրա տեսակետը ժողովուրդների՝ իրենց պատմությունից անհրաժեշտ դասեր չքաղելու վերաբերյալ, ինչը առանձնանում (տարբերվում) է շատ փիլիսոփաների ու պատմաբանների մոտեցումներից ու գնահատականներից:

Նախ մեջբերենք մի ընդարձակ քաղվածք Հեգելի աշխատությունից.

«Պետական մարդկանց և ժողովուրդներին սովորաբար խորհուրդ են տալիս պատմության փորձից խրատ (դաս) առնել: Սակայն պատմությունը և փորձը ուսուցանում են, որ **ժողովուրդները և կառավարությունները երբեք պատմությունից ոչինչ չեն սովորել** (ընդգծումը մերն է– Ա. Հ.) և

[19] Տե՛ս **Гегель Г.**, նույն տեղում:
[20] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 62.
[21] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 61.

չեն գործել՝ համաձայն այդ դասերի (խրատների), որոնցից որ հնարավոր լիներ դասեր քաղել: Յուրաքանչյուր դարաշրջան ունենում է այնպիսի առանձնահատուկ հանգամանքներ, յուրաքանչյուր դարաշրջան ունենում է այնպիսի **ինքնատիպ իրավիճակներ**, որ այդ ժամանակամիջոցում հնարավոր ու անհրաժեշտ է ընդունել միայն այնպիսի որոշումներ, որոնք կբխեն հենց այդ իրավիճակից (կացությունից): Համաշխարհային իրադարձությունների այդ եռուզեռում չեն օգնի ընդհանուր սկզբունքը կամ նմանվող հանգամանքների մասին հիշողությունները, որովհետև անցյալի գունազուրկ հիշողությունները չեն կարող համեմատվել ներկայիս ազատության և կենսունակության հետ»[22]:

Նախ ուզում ենք արձանագրել, որ պատմությունից ժողովուրդների չսովորելու և դասեր չառնելու մասին խոսույթը հիմնավորելու համար Հեգելը՝ որպես օրինակ, բերել է գերմանացի պատմաբան Յոհան Մյուլլերի աշխատությունից մի դրվագ, երբ վերջինս փորձել է հին հունական և հռոմեական ժամանակների իրադարձությունները համեմատել Ֆրանսիական հեղափոխության դարաշրջանի հետ[23]: Բայց այդ եզակի փաստարկը բավական չէ ասված միտքը հիմնավորելու համար: Բանն այն է, որ, թե՛ ժամանակագրական տեսանկյունից, թե՛ էթնիկ կազմի և թե՛ բովանդակային առումներով Հին Հունաստան–Հռոմը և XVIII դարավերջի Ֆրանսիան պատմական ընդհանրությամբ իրար հետ աղերս չունեն: Բայց վիճակը կտրուկ փոխվում է, երբ մենք գործ ենք ունենում միևնույն ժողովրդի հետ՝ անկախ ժամանակագրական հեռավորության, տեղի ունեցած իրադարձության ու հանգամանքների: Եվ դրա ամենավառ օրինակը կարող են հանդիսանալ, օրինակ, Հայոց պատմության դրվագները:

Հեգելի բերած դատողությունը կարելի է հասկանալ ու բացատրել նրանով, որ պատմական իրադարձություններն անգամ միևնույն երկրում ու ժողովրդի մոտ նույնությամբ չեն կրկնվում. ժամանակի ու տարածության մեջ իրադարձությունները տարբեր կերպ են դրսևորվում, ինքնատիպ են ու անհատական: Դեռևս հույն փիլիսոփա **Հերակլիտեսը** (520–460 թթ. մ. թ. ա.) պնդում էր, որ բնության ու հասարակության մեջ ամեն ինչ շարունակ շարժվում ու փոփոխվում է: Եվ այդ իմաստով դժվար է բառացի ըն-

[22] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 61-62, տե՛ս նաև՝ **Гегель Георг,** Философия истории, https://mybook.ru/author/fridrih-gegel/filosofiya-istorii/citations/?page=2 (մուտք՝ 03. 04. 24 թ.):

[23] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 62.

կալել ու դասեր առնել հետագա գործունեության ճանապարհին[24]: Սակայն, այնուամենայնիվ, պատմական փորձը ցույց է տալիս, որ կան երևույթներ ու գործընթացներ՝ դրական թե բացասական, որոնք հաճախակի կրկնվում են, և տվյալ ժողովուրդը, ազգը, պետությունը կարող են ընդհանուր գծերով դրանցից հետևություններ անել և համապատասխան վարքագիծ ու գործելակերպ մշակել: Այսպես, օրինակ, Հայոց պատմության վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում շարունակ կրկնվող դաժան փորձը ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը, մեղմ ասած, չի կարող դրական վերաբերմունք ունենալ հարևան Թուրքիայի, իսկ մեր ժամանակներում՝ նաև Ադրբեջանի իշխանությունների հանդեպ: Մինչդեռ դրան հակառակ՝ հայ-իրանական՝ ավելի քան երեքհազարամյա պատմությունը հուշում և համոզում է, որ Հայաստանն ու հայ ժողովուրդը կարող են լոյալ ու բարյացակամ հարաբերություններ ունենալ մեզ դրկից Իրանի պետության և իրանական ժողովրդի հետ: Այս ամենը՝ որպես պատմական անցյալից եկած պատմական փորձ և պատմությունից ստացած դաս, հայ ժողովրդի մեջ արմատացել է որպես **սոցիալ-հոգեբանական** երևույթ և, թերևս, տևական ժամանակի մեջ շատ դժվար կլինի այն փոփոխել:

Ըստ ամենայնի՝ պատմության այս պարադոքսում մեծ դեր է խաղում ազգային ու պետական տվյալ միավորի մեջ դարերով արմատացած ու կարծրատիպի վերածված հավաքական մտածելակերպը, որը դժվարությամբ է վերափոխվում: Այնուամենայնիվ, ժողովուրդները պատմությունից ավելի շատ սովորում են ու դասեր առնում: Սակայն Հայոց պատմության հոլովույթում ևս ծագել են խնդիրներ, երբ գործնական քաղաքականության մեջ հայ ազգային ու պետական շրջանակները ոչ միշտ են հետևել ու հաշվի առել սեփական պատմության փորձն ու դասերը:

Անշուշտ, մարդկանց և ազգերի անհատական ու հավաքական բանականության ու մտածողության մեջ առկա են նաև կրկնվող և **պարադոքսալ** երևույթների դրսևորումներ: Պետությունները, ազգերը, անհատականությունները, մարդիկ առաջնորդվում են իրենց որոշակի վարքագծերով, շահերով ու կրքերով և ձգտում են դրանք իրականացնել, կյանքի կոչել: Բայց միշտ չէ, որ դրանք կարող են իրականանալ իրենց շահերին ու նպատակներին համապատասխան: Նույնիսկ կարող է ստացվել հակառակ արդյունքը: Բանն այն է, որ ազգերն ու պետությունները հաճախ հաշվի չեն առնում պատմության փորձն ու դասերը և կրկնում են վնաս

[24] Հանրահայտ է Հերակլիտեսի թևավոր դարձած խոսքը, որ «Միևնույն գետը հնարավոր չէ երկու անգամ մտնել»: Տե՛ս Новейший философский словарь, изд. 3-е, Минск., 2003, с. 238.

բերող միևնույն սխալը, ինչը և վերածվում է մի տեսակ բարդույթի կամ ողբերգության: Պրոֆ. Ա. Սարգսյանը, մեջբերելով հեգելյան սույն միտքը, նշում է, որ այդ հանգամանքը նկատի առնելով՝ Գ. Հեգելը արձանագրել է, որ ազգերը, ժողովուրդներն ու պետությունները ոչինչ չեն սովորում ու դասեր չեն քաղում իրենց պատմությունից[25]:

Հեգելի բացատրությամբ՝ պատմական գործընթացը եզակի է և չի կարող կրկնվել, որպեսզի հնարավոր լինի դասեր քաղել, քանի որ կա նախապես (վերուստ) մշակված սցենար, և այլևս հնարավոր չէ ոչինչ փոխել, ուստի և անիմաստ է անցյալից դասեր քաղել: Սրանում կարծես առկա է վերուստ տրված ճակատագրապաշտության գաղափարը: Այս առումով հարկ ենք համարում հիշեցնել, որ ժամանակին Վ. Լենինն իր «Փիլիսոփայական նամակներ» կոնսպեկտ-գրառումներում անդրադարձել է Հեգելի վերոնշյալ աշխատությանը: Նա քաղվածք է բերել Հեգելից, որ պատմությունը ուսուցանում է, որ «ժողովուրդներն ու կառավարությունները երբեք և ոչինչ չեն սովորել պատմությունից, քանզի յուրաքանչյուր ժամանակաշրջան այդ անելու համար **չափազանց ինդիվիդուալ է** (ընդգծումը մերն է- Ա. Հ.)»[26]: Լենինը, հավանություն տալով և «շատ խելոք միտք» համարելով՝ վերահաստատում է Հեգելի արտահայտածը, որ «Յուրաքանչյուր դարաշրջանին հատուկ են այնքան յուրահատուկ հանգամանքներ, նա այնքան ինդիվիդուալ գոյավիճակ է իրենից ներկայացնում, որ նրանից իսկ ելնելով միայն, նրա վրա հենվելով՝ պետք է և միմիայն հնարավոր է դատել նրա մասին»[27]: Բայց կարելի է առարկել վերը ասվածը և պնդել, որ պատմական այս կամ այն ժամանակաշրջանը, իր ներքին ու արտաքին հանգամանքներով ու դրսևորումներով, որքան էլ յուրահատուկ (ինդիվիդուալ) լինի, այնուամենայնիվ, տվյալ պետությունը կամ ժաղովուրդն իր պատմությունից հիմնական գծերով կարող է և պարտավոր է ուսանելի դասեր քաղել՝ հետագայում նույն սխալը, երբեմն նույնիսկ՝ աղետալի սխալը չկրկնելու համար: Չմոռանանք նաև նշել, որ որքան էլ Հեգելը խոսել է պատմությունից չսովորելու և դասեր չառնելու մասին, այնուամենայնիվ, նա ակնարկում է պատմության պրագմատիկ ռեֆլեքսայնության և երեխաների բարոյական դաստիարակությանը նպաստ բերելու մասին[28]:

---

[25] Տե՛ս **Սարգսյան Ա.**, Փիլիսոփայության դասընթաց, Եր., «Տնտեսագետ», 2010, էջ 192:
[26] **Լենին,** Երկեր, 4-րդ հրատ., Եր., «Հայաստան» հրատ., 1962, էջ 387-388:
[27] **Լենին**, Երկեր, նշվ. աշխ., էջ 388:
[28] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 61.

Հանրագումարի բերելով վերը շարադրվածը, այդուհանդերձ, ուզում ենք չհամաձայնել պետությունների, ժողովուրդների՝ պատմությունից ոչինչ չսովորելու և դասեր չառնելու մասին Հեգելի արտահայտած մտքին՝ այն պատճառաբանությամբ, որ թեև ազգերն ու պետություններն իրենց պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ կրկնել են գրեթե միևնույն սխալը, բայցևայնպես, հաշվի առնելով անցյալի՝ հատկապես դառը փորձն ու դասերը՝ նրանք երբեմն էլ ջանացել են դրանք հաշվի առնել հատկապես իրենց ազգային, պետական պատմության ճակատագրական շրջադարձների ժամանակ, հակառակ պարագայում ընդհանրապես իմաստազուրկ կդառնա մեր պատմագիտական աշխատությունների, ատենախոսությունների եզրահանգումներում հաճախ արձանագրվող այն խոսույթը, որ ուսումնասիրում ու սովորում ենք պատմություն, որպեսզի դրանից գործնական **դասեր** քաղենք:

Գ. Հեգելի խմբավորած պատմության երրորդ տեսակը **փիլիսոփայական պատմությունն է** (философская история): Ընդհանրապես, պատմության փիլիսոփայություն նշանակում է ոչ այլ բան, քան մտովի (մտասույզ) քննել այն: «Առանց մտածողության մենք չենք կարող գործել, որի շնորհիվ էլ տարբերվում ենք կենդանիներից, և մտածողության միջոցով է ձեռք բերվում զգացողությունը, գիտելիքը, ճանաչողությունը, ձգտումն ու կամքը: Սակայն պատմության պարագայում միայն մտածողությունը կարող է բավարար չլինել, քանի որ պատմության մեջ մտածողությունը ենթարկվում է տրվածին և գոյին, (мышление подчинено данному и сущему), հիմնված է նրա վրա և առաջնորդվում է նրանով, իսկ փիլիսոփայության մեջ ընդհակառակը. ծնվում են ինքնուրույն մտքեր, որոնք մտովի կամ մտահայեցողությամբ ծագում են ինքնին (ինքն իրեն)՝ հաշվի չառնելով այն, թե ինչ կա: Փիլիսոփայությունը պատմությանը չի մոտենում և չի քննում որպես նյութ, այլ կարծես այն մտակառուցում է a priori»[29]: «Բայց պատմությունը,- շարունակում է Հեգելը,- պետք է ընդգրկի (ներառի) միայն այն, ինչը եղել է ու կա՝ գործերը, երևույթները, իրադարձությունները, և նա ավելի մոտ կլինի ճշմարտությանը, եթե ավելի հենվի դրանց վրա: Այս պարագայում փիլիսոփայության խնդիրը կարծես հակասում է պատմության այդ ձգտմանը, ինչը գալիս է մեր մտահայեցողություններից»[30]:

Բայց փիլիսոփայությունն իր հետ բերում է բանականության գոյության մասին այն հասարակ միտքը, որ բանականությունը իշխում է աշխարհում,

---

[29] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 63.
[30] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 63-64.

և հետևապես համաշխարհային պատմական գործընթացը տեղի է ունեցել բանականորեն: Այդ հասկացությունն ու համոզմունքը նախադրյալ են հանդիսանում պատմության համար որպես այդպիսինի, իսկ փիլիսոփայության համար դա (համաշխարհային պատմական գործընթացը) նախադրյալ չի հանդիսանում: «Մտահայեցողական ճանաչողության միջոցով,– գրում է Հեգելը,– պարզվում է, որ ստույգ չպարզելով նրա հարաբերությունը աստծո հանդեպ՝ բանականությունը հանդիսանում է **սուբստանցիա** (հիմք, հիմնապատճառ՝ որպես ամբողջ բնության և հոգևոր կյանքի անվերջանալի **սկիզբ** ու **հզորություն** (ընդգծումը մերն է– Ա. Հ.)»[31]: Նա դարձյալ հղում է անում հույն փիլիսոփա Անաքսագորասին, ով առաջինն է ասել, որ «**Բանականությունը կառավարում է աշխարհը** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[32]: Հեգելը չի բավարարվում Անաքսագորասի արտահայտած սույն մտքով, այլ ձգտում է այդ սկզբունքը, իր դիալեկտիկ մեթոդի կիրառմամբ, տեսնել բանականության կոնկրետ ճշմարտությանը տանող գործողության ու զարգացման մեջ: Հեգելն օրինակ է բերում Արեգակնային համակարգը, երբ բնության անփոփոխ օրենքով արեգակը, մոլորակները պտտվում են իրենց առանցքի և միաժամանակ արեգակի շուրջ, սակայն ո՛չ արեգակը և ո՛չ էլ մոլորակները չգիտեն, թե ինչ օրենքներով են իրենք պտտվում, իսկ դրա իմացության համար մենք պարտական ենք մեր խելքին ու բանականությանը, ինչը սովորական է թվում մեզ համար[33]: Այս իմաստով էլ, կարելի է ասել, Հեգելի գործածած՝ ոգին է կառավարում աշխարհը, նաև՝ համաշխարհային պատմությունը:

Հեգելի մեկնաբանությամբ՝ մարդկային **բանականությունը** ոչ միայն **սուբստանցիա** է, անվերջանալի բովանդակություն, ամբողջական էություն ու ճշմարտություն, այլև հանդիսանում է **ինքն իր համար** այն առարկան, որն իր վերջնական գործունեության համար **կարիք չունի** անհրաժեշտ տվյալներ քաղելու արտաքին նյութերից ու միջոցներից: Նա այդ բոլորը վերցնում է ինքն իրենից, և ինքը հանդիսանում է այն նյութը, որը մշակում է, քանի որ ինքն իր համար հանդիսանում է և՛ սեփական նախադրյալ, և՛ բացարձակ վերջնական նպատակ, իրականացնում է անցումը իր ներքին աշխարհից ոչ միայն դեպի բնության աշխարհ, այլև հոգևոր աշխարհ, այսինքն՝ «**համաշխարհային պատմություն**»[34]: Բայց այստեղ

[31] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ. 64:
[32] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 66, տե՛ս նաև՝ «**Гегель**, Сочинения, т. VIII, перевод А. М. Водена», М.-Л., «Гос. издать», 1935, с. 12.
[33] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 66.
[34] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 64:

ենթադրվում է, որ փիլիսոփայությունը պետք է ապացուցի բանականության գաղափարների ճշմարտացիությունը, հավերժականությունը, փառքն ու մեծությունը[35]:

Այնուհետև Հեգելը մեկնում է, որ պատմությունը, այդ թվում՝ գերմանական կամ առհասարակ համաշխարհային, պետք է «քննել այն տեսքով, ինչպես այն գոյություն ունի, ընդ որում, այն պետք է վերարտադրվի **պատմականորեն** և **էմպիրիկ** (գործնական, փորձնական)՝ թույլ չտալով մտացածին ու ապրիորի պատմություններ»[36]: Այդ առնչությամբ նա նույնիսկ կշտամբում է գերմանացի որոշ հեղինակավոր պատմաբանների:

## 3.Դատողություններ ու մեկնաբանություններ **ազատության** մասին

Ինչպես ասվեց, Հեգելը, հենվելով հույն փիլիսոփաներ Անաքսագորասի, Սոկրատեսի, Արիստոտելի և մյուսների, ինչպես նաև՝ իր սեփական մտքերի ու դատողությունների վրա, նշում է, որ բանականությունն է իշխել ու իշխում կամ կառավարում աշխարհը, որ այն **ազատ է**, ինչը կնշանակի՝ համաշխարհային պատմական գործընթացը տեղի է ունեցել բանականորեն: Նա գտնում էր, քանի որ մենք գործ ունենք համաշխարհային պատմության մեջ անհատականությունների, ժողովուրդների, պետությունների հետ, ուստի չի կարելի բավարարվել աստվածային, կրոնական անորոշ հավատներով ու ներկայացնել պատմությունը՝ մանավանդ, որ «անհնար է ճանաչել Աստծուն»[37]: Դրա փոխարեն Հեգելը առաջ է քաշում **ոգու** միջոցով աշխարհի ճանաչման իր գաղափարը, որը չի նմանվում և չի նույնանում աստվածայինին: Քանի որ բանականությունն է կառավարել ու կառավարում աշխարհը, ուստիև մարդկային, աստվածային, թե համաշխարհային ոգին հնարավորություն է տվել ստեղծագործ բանականության, զգացողության, գիտության և այլ միջոցներով ճանաչել աշխարհը, բնությունն ու համաշխարհային պատմությունը: «Մեր ճանաչողությունը ձգտում է հասկանալու այն, որ մեր հավերժ խորամանկելու նպատակադրումները իրականացվեն ինչպես բնության ոլորտում, այնպես էլ իրական ու գործնական ոգու աշխարհում»[38]:

---

[35] Տե՛ս **Гегель Г.**, նույն տեղում:
[36] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 65:
[37] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 68:
[38] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 69.

Հեգելի պատկերմամբ՝ համաշխարհային պատմությունը իրականացվում է հոգևոր ոլորտում: Աշխարհն ընդգրկում է ֆիզիկական ու հոգևոր (հոգեկան) բնությունը, որ ֆիզիկական բնությունը որոշակի դեր է խաղում համաշխարհային պատմության մեջ (այստեղ, իհարկե, խոսքը աշխարհագրական գործոնի մասին է – Ա. Հ.), բայց այն սուբստանցիա (հիմք, հիմնապատճառ) չէ և այն ծառայում է **բնության ոգուն**»[39]:

Հեգելը, արժևորելով իր պատկերացրած (նկարագրած) ոգու դերը, կատարում է հետևյալ բանաձևումը. «Ինչպես որ մատերիայի սուբստանցը հանդիսանում է **ծանրությունը**, նույնպես և մենք պետք է ասենք, որ ոգու սուբստանցը, էությունը հանդիսանում է **ազատությունը** (ընդգծումը մերն է– Ա. Հ.)»[40]: Մեր կարծիքով՝ Հեգելի՝ ոգու վերաբերյալ (անվանման ձևը՝ մարդկային, բնության, ազգային, ընդհանուր, բացարձակ, թե համաշխարհային՝ կարևոր չէ) փիլիսոփայության այս կտրվածքում ամենամեծ գնահատականը կարելի է համարել այն, որ այդ **ոգի** կոչվածի էությունը, վերջնական իմաստը բնության մեջ, թե՛ պատմության և թե՛ ամենուր միջոց է՝ ձգտելու գլխավորին, ամենավեհին՝ ազատությանը, դա կլինի մարդ, ազգ–ժողովուրդ, պետություն, թե այլ հոգևոր արժեք:

Հեգելը սովորեցնում էր, որ ոգուն, այլ հատկությունների շարքում, առաջնահերթ բնորոշը ազատությունն է, և ոգու մնացած բոլոր հատկությունները գոյություն ունեն միայն շնորհիվ ազատության և հանդիսանում են միջոց նրա համար, դրանք բոլորը փնտրում և ծնում են նրան: Մտահայեցողական փիլիսոփայությունն «Ընդունում է, որ ազատությունն է միակ ճշմարիտ ոգին»[41]: Մեկ այլ տեղ նա բանաձևում է. «Համաշխարհային պատմությունը դա առաջընթացն է ազատության գիտակցման մեջ»[42]. Իսկ մեր ժամանակների ամերիկացի փիլիսոփա Ֆր. Ֆուկույաման, կոնկրետացնելով Հեգելի սույն միտքը, նշում է. «Համաշխարհային պատմությունը ոչ այլ ինչ է, քան Ազատության առաջընթացի գիտակցումը»[43]:

Հեգելը շարունակում է իր պատկերած **ոգու** էության և **ազատության** միջև կապի վերաբերյալ դատողությունները (մեկնաբանությունները): Եթե մատերիայի սուբստանցիան գտնվում է նրանից դուրս, ապա ոգունը իր մեջ է որպես **կեցություն** (գոյ): Հենց դա է ազատությունը, որովհետև, «Եթե ես հանդիսանում եմ կախյալ, ապա ինձ կախման մեջ եմ դնում ինչ-

[39] **Гегель Г**., նույն տեղում:
[40] **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 70
[41] «Признает, что свобода является единственно истинным духом», **Гегель Г**., նույն տեղում:
[42] «Всемирная история есть прогресс в сознании свободы», **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 72.
[43] **Фукуяма Фр**., Конец истории и последний человек, М., изд. «Ермак», 2005, с. 108.

որ ուրիշից, որպիսին ես չեմ հանդիսանում, ես չեմ կարող լինել առանց ինչ-որ արտաքինի, ես ազատ եմ այն ժամանակ, երբ ես ինքս ինձ հետ եմ: Իմ կեցության (կամ գոյի) ոգին հենց ինքնագիտակցությունն է, ինքն իրեն գիտակցելը»[44]: Հենց այդ մոտեցմամբ՝ համաշխարհային պատմությունը ևս հանդիսանում է ոգու բացահայտումն այն տեսքով, որ նրա միջոցով այն ինքն իր համար վիրտուալ կերպով ամբողջ պատմության վերաբերյալ գիտելիք է մշակում ու բովանդակում:

Հեգելը տեսական-փիլիսոփայական իր այս հարացույցը տարածում է կոկրետ երկրների ու ժողովուրդների վրա: Նա գտնում է, որ «Արևելքի ժողովուրդները դեռ չգիտեն, որ ոգին կամ մարդը, որպես այդպիսին, ինքն իրեն ազատ է, և քանի որ նրանք այդ մասին չգիտեն, ուստի նրանք ազատ չեն: Նրանք միայն գիտեն, որ **մեկն** է (ընդգծված է – Ա. Հ.) ազատ»[45]: Եվ, ըստ Հեգելի, պարզվում է, որ այդ միակ ազատ մարդը **դեսպոտն** է, բռնակալը: Դրան հակակշիռ՝ Հեգելի դիտարկմամբ՝ «Միայն հույների մոտ է ի հայտ եկել ազատության գիտակցությունը, և դրա համար էլ նրանք եղել են ազատ: Բայց նրանք, ինչպես և հռոմեացիները, գիտեին միայն այն, որ ոմանք ազատ են, և ոչ թե մարդը որպես այդպիսին: Դա չգիտեին նույնիսկ Պլատոնը և Արիստոտելը»[46]: Այստեղ՝ որպես փաստարկ, բերվում է այդ երկրների կյանքի ու կեցության հետ կապված ստրկության առկայության հանգամանքը: Եվ, ի տարբերություն այդ ամենի՝ Հեգելը, միգուցե հակում ունենալով ընդգծել իր ազգի բարձր ոգու տեսլականը, առանձնացնում է միայն գերմանական ժողովրդին, որի մոտ «ոգու ազատությունը հանդիսանում է նրա բնության (էության) հիմնական հատկությունը»[47]:

Իմիջիայլոց, այս կապակցությամբ խոսելով ազգային ոգու և ազատության գաղափարների մասին, կարելի է հարց բարձրացնել, թե Հին Հայաստանում մարդկային ոգու ազատության առումով **հայ** մարդը ազա՞տ է եղել, թե՞ ոչ: Կամ նույն հարցը կարելի է տալ ներկայիս հավաքական հայի ազգային-հոգևոր ինքնագիտակցության ու մտածողության վերաբերյալ: Մեր տպավորությամբ՝ Հայաստանի ու հայության ներկայիս կյանքը, իրականությունը, գործելակերպը, վարվող քաղաքականությունը

---

[44] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 71. (ռուս.՝ «Если я являюсь зависимым, то отношу себя к чему-то другому, чем я не являюсь; я не могу быть без чего-то внешнего; я свободен тогда, когда я есть самого себя. Это у себя бытие духа есть самосознание, сознание самого себя»).

[45] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 71.

[46] **Гегель Г.**, նույն տեղում:

[47] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 71.

և այլն նկատի առնելով՝ կդժվարանանք այդ հարցին դրական պատասխան տալ: Հայոց երկիրը կարելի է դիտարկել միայն պարսից Աքեմենյան հարստության ժամանակներից մինչև մեր օրերն ընկած հազարամյակների իրադարձությունները, ապա թեկուզ միայն քաղաքական կողմնորոշման տեսակետից, ինչպես հարկն է՝ չի առաջնորդվել սեփական ուժերին ու կարողություններին ապավինելու մեր մեծերի պատգամին, այլ, որպես կանոն, ավելի շուտ և շատ ապավինել է արտաքին ուժերի՝ մշտապես շահ հետապնդող ու կողմնակալ օգնությանը և շարունակ տուժել է և արդյունքում՝ մարդկային, տարածքային, նյութական ու բարոյական հսկայական կորուստներ ունեցել: Այս փաստը միայն մեզ հիմք է տալիս պնդելու, որ պատմականորեն ճիշտ չէ հայ ժողովրդին դասել տևականորեն ազատ ազգերի շարքին, ինչպես Հեգելն է դասել գերմանական ժողովրդին: Ինչ վերաբերում է մեր պատմության ակունքներում ընկած առասպել – ավանդույթներին՝ «Հայկ և Բել» ավանդապատմանը կամ «Սասունցի Դավիթ» էպոսին և այլն, ապա դրանք, ինչպես Հեգելը և մյուս մեծերն են ասում, չի կարելի դասել պատմական փաստի շարքը, դրանք պարզապես ժողովրդի ստեղծած (հնարած) հերոսապատումներ են՝ ժողովրդին մեծարելու, նրան ուժ և ոգի հաղորդելու նպատակով: Բայց դարձյալ հեգելյան մեթոդով հարկ է փաստել, որ **հայի ոգուն** պատմականորեն խորթ չի եղել ազատության ձգտումը, որն արտահայտվել է նրա դարավոր ազատագրական պայքարի դրվագներում: Ընդ որում, այդ ձգտումը ագրեսիվ նպատակներ ու նկրտումներ չի հետապնդել: Այդ իմաստով տեղին է գրականագետ Էդ. Թոփչյանի արձանագրած դիտողությունը, որ «Ազատագրական ձգտումը հայ ազատագրության մեջ՝ չէր հանգում ուրիշների վրա իշխելու մտքին»[48]: Պետք է նշել, որ հայի ոգին նաև նրա պատմությունն է, նրա կրոնը, քաղաքական ազատության ձգտման աստիճանը: «Ապագան ու յաղթանակը պատկանում են ոգուն»[49]: Ժողովրդի ոգին ձևավորվում է հանգամանքների բերումով: Այն կարող է ի հայտ գալ կտրուկ, ճակատագրական, շրջադարձային իրադարձությունների ժամանակ՝ պատերազմ, հեղափոխություն, ինքնապաշտպանություն, բնական աղետ և այլն:

Շարունակելով մտորել ազատության մասին՝ Հեգելը նշում է, որ ազատության գիտակցումը (գիտակցությունը) ապահովում, խթանում է առաջընթացը ոչ միայն համաշխարհային պատմության մեջ, այլև բնության, մարդկության, հասարակության առաջընթացին (պրոգրեսին) ընդհանրա-

[48] **Շանթ Լ.**, Երկեր, Եր., «Սով. Գրող», 1989, էջ 12:
[49] **Նժդեհ Գ.**, Հատընտիր, Եր., «Ամարաս», 2006, էջ 626:


ՎԻՄ հանրակրթական հանդես, ՀՀ (ՊՀ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

պես: Պետք է նկատի ունենալ, որ հոգևոր աշխարհը սուբստանցիոն աշխարհ է, իսկ ֆիզիկական աշխարհը ենթարկվում է նրան[50]: «Եթե ազատությունը, որպես այդպիսին, ամենից առաջ ներքին հասկացություն է, ապա դրան հասնելու միջոցները, ընդհակառակը, դառնում են արտաքին նրանով, որ անմիջապես աչքի են զարնում և հայտնվում են պատմության մեջ: Մոտակա պատմության քննությունը համոզում է մեզ նրանում,– շարունակում է Հեգելը,– որ մարդկանց գործողությունները բխում են իրենց պահանջմունքներից, իրենց կրքերից[51], իրենց **շահերից**, իրենց բնավորությունից ու ընդունակությունից և ընդսմին պատմության այդ դրամայում դրանց դրդող շարժառիթները հանդիսանում են միայն այդ պահանջմունքները, կրքերը, շահերը, և դրանք են խաղում գլխավոր դերը»[52]: Նա մեծապես շահերի հետ էր կապում պատերազմները: Քանի որ գոյություն ունեն ազգային-պետական շահեր, ուստիև անխուսափելի են պատերազմները: Հեգելը խաղաղության հարցում հոռետես էր: Բայց և դրա կողքին մեծ փիլիսոփան չի մոռանում նշել, որ, շահերից զատ, կարող են լինել նաև բարի մտադրություններ ու գործեր:

Այդուհանդերձ, վերը բերվածից կարելի է հետևեցնել, որ պատմության հետագծի վերաբերյալ երկու հարյուր տարի առաջ Հեգելի տված տեսական շատ մեկնաբանություններ ու գնահատականներ արդիական են նաև մեր ժամանակների համար: Ավելին՝ գրեթե բոլոր ժամանակների պատմական զարգացումների առանցքում, անշուշտ, ընկած է եղել **շահը**՝ իր բոլոր ձևերով, տեսակներով ու դրսևորումներով, ինչը փիլիսոփայական իմաստավորմամբ՝ բնական ու բանական է:

## 4. Հեգելի դիտարկումները պատմական անհատների, պետականությունների ու ժողովուրդների մասին

Հեգելը համաշխարհային-պատմական մասշտաբի անհատականություններ համարում էր նրանց, ովքեր, իրենց ժամանակին բախվելով գոյություն ունեցող ճանաչված օրենքների, իրավունքների, պարտականությունների համակարգի հետ, հանդուգն կամք հանդես բերելով, հակադրվում էին դրանց, խախտում և նույնիսկ քանդում դրանց հիմքերը՝ փոխարենն առաջադրում նախկինին հակադիր ավելի օգտակար ու արդյու-

[50] Տե՛ս **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 72.

[51] Ավելին, մեկ այլ տեղ հեղինակը ընդգծել է հետևյալ միտքը, որ «**Աշխարհում ոչ մի մեծ բան առանց կրքի չի իրագործվել**» (տե՛ս **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 76, տե՛ս նաև՝ **Гегель**, Сочинения,т. VIII, М.-Л., 1935, с. 23).

[52] **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 73.

նավետ բովանդակության, դեպի ճշմարիտ ուղի տանող և առաջընթաց ապահովող պատմական համընդհանուր նշանակություն ունեցող գաղափար (ծրագրային համակարգ)՝ տվյալ ժողովրդի ու պետության համար[53]: Նա այդպիսի մարդկանց թվին էր դասում Հ. Կեսարին, ով պայքարելով իր թշնամիների դեմ, ունենալով, իհարկե, իր մասնակի անձնական շահերը, նաև եսակենտրոն հակումները, սակայն պահպանելով Հռոմի սահմանադրության ձևը՝ կարողացավ Հռոմին միավորել պրովինցիաները և դառնալ պետության միանձնյա տիրակալ (властелин)[54]: Հեգելի պատկերմամբ՝ Կեսարի միանձնյա իշխանությունը Հռոմի վրա հետագայում ինքնին ուղենիշ դարձավ ոչ միայն Հռոմի, այլև համաշխարհային պատմության համար[55]:

Աշխատության մեկ այլ հատվածում Հեգելը կրկին մեծարում է Կեսարին՝ նշելով, որ նա բացեց Եվրոպայի սիրտը՝ նվաճելով Գալլիան: Ըստ Հեգելի՝ հռոմեական զորավարի իրականացրած այդ սխրանքն ավելի հաջողված էր, քան անգամ պատանի Ալեքսանդրինը, ով փորձեց Արևելքն ինտեգրել հունական կյանքին, բայց նրա այդ գործը հետագայում անհետացավ[56]: Այս առնչությամբ կարելի է առարկել Հեգելին՝ այն իմաստով, որ Ալ. Մակեդոնացու արշավանքի թողած համաշխարհային նշանակության ամենամեծ հետևանքն այն եղավ, որ դրանով Արևելք ներթափանցեց հունական բարձր մշակույթն իր բոլոր դրսևորումներով և, միախառնվելով Արևելքի մշակույթին, այդ թվում՝ հայկականին՝ ձևավորեց քաղաքակրթության նոր որակ՝ **հելլենիզմ** (հունականություն)[57]: Եվ գիտական շրջանակներում նույնիսկ վարկած կա, որ հելլենիզմի դարաշրջանը կարելի է դիտել պատմության պարբերացման ավելի քան վեց դար տևած ինքնատիպ մի պատմաշրջան, որը շարունակվեց ընդհուպ մինչև քրիստոնեության ընդունումը:

Կեսարի պատմական դերին ու անհատականությանն անդրադարձել է Հին Հռոմի պատմության լավագույն մասնագետ **Թ. Մոմզենը** (1817–1903 թթ.): Նա ևս, ըստ ամենայնի, Հեգելի աշխատության ազդեցությամբ, շատ բարձր գնահատական է տվել Կեսարի սուբյեկտին (անհատականությա-

[53] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 81.

[54] Տե՛ս **Гегель Г.**, նույն տեղում:

[55] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 82:

[56] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 145–146 (տե՛ս ռուս. «Подвиг Цезаря оказался успешнее, чем юношеский подвиг Александра, который попытался приобщить Восток к греческой жизни,- дело, которое, правда, по содержанию является величайшим и прекраснейшим для воображения, но результат которого вскоре исчез, как исчезает идеал».

[57] Ի դեպ՝ «Հելլենիզմ» տերմինը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել գերմանացի ականավոր պատմաբան Յոհան Դրոյզենը (1808–1884 թթ.) (տե՛ս **Дройзен И. Г.**, Историка, СПб, изд. «Вл. Даль», 2004, с.5).


ՎԻՄ հանդեսի հանդես, ՀՀ (ՌԴ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

նը): Այսպես՝ Հուլիոս Կեսարի ռազմաքաղաքական դիմանկարը ներկայացնելիս Թ. Մոմզենը չափից ավելի է մեծարել Հ. Կեսարին՝ նրան համարելով մեծագույն պետական գործիչ: Օրինակ՝ նրա գնահատմամբ՝ «Գալլիայի նվաճումը և միացումը Միջերկրածովյան շրջանին՝ նույն ազդեցությունն ունեցավ, ինչը Կոլոմբոսի կողմից Ամերիկայի հայտնագործումը միջնադարյան Եվրոպայի վրա»[58]: Նման համեմատությունը, հավանաբար, կարելի է դիտել որպես չափազանցություն:

Հեգելը, հայացք նետելով համաշխարհային պատմական նշանակության անհատականությունների վրա՝ պարզել է, որ նրանց անձնական կյանքն ու ճակատագիրը այնքան էլ երջանիկ չեն եղել: Պատմական անհատականությունները, երբ հասնում են իրենց նպատակին, վաղ մահանում են, ինչպես Ալեքսանդր Մակեդոնացին, նրանց սպանում են, ինչպես Հ. Կեսարին կամ աքսորում են, ինչպես Նապոլեոնին՝ Սբ. Ելենայի կղզի[59]:

Այնուհետև Հեգելը պատմական անհատներից սահուն անցնում է պետության (Allgemeines)-ի գաղափարին: Սրանցում տրամաբանական կապն այն է, որ յուրաքանչյուր պատմական անհատականության կյանքի ու գործունեության առանցքը, անշուշտ, հանդիսացել է պետությունը: Նախ՝ Հեգելը գտնում էր, որ օրենքները՝ որպես պետականության կառույցի կարևորագույն տարրեր, պիտի բարոյական լինեն: Բանականության բացարձակ շահն արտահայտվում է նրանում, որ իրագործվեն բարոյական նպատակներ, և հենց դրանում է կայացել պատմական հերոսների իրավացիությունն ու ծառայությունը, որ հիմնել են պետություն, թեկուզ որքան էլ որ այն կատարյալ չի եղել: «**Համաշխարհային պատմության մեջ**,- գրում է Հեգելը,- **խոսք կարող է լինել միայն այն ժողովուրդների մասին, որոնք ձևավորում են պետություն** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»[60]: Պետությունը՝ որպես բացարձակ վերջնական նպատակ, գոյություն ունի ինքն իր համար և իրականացնում է ազատություններ: Պետությունում առկա կեցության համընդհանրականության պայմաններում մարդու սուբյեկտիվ կամքն անհրաժեշտաբար ենթարկվում է գործող օրենքներին ու իրավական նորմերին, և դրան հակառակ՝ նրա սուբյեկտիվ ազատության անհ-

[58] **Моммзен Т.**, История Рима, т. 3, М., «Гос. издать», 1941, с. 243-244.

[59] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 82-83.

[60] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 90. «Իրավունքի փիլիսոփայություն» աշխատությունում Հեգելն ավելի հանգամանալի է խոսում պետության դերի ու գործառույթների մասին (տե՛ս **Гегель Г.**, Философия права, М., 1990. 524 с.):

ռաժեշտությունը վերանում է[61]: Եվ այդ հանգամանքը չի հակասում հեգելյան այն հայտնի թեզին, թե «մարդն իր բնությամբ ազատ է»[62]:

Հեգելը, խոսելով մարդու սուբյեկտիվ ազատության և պետության փոխհարաբերության մասին, առանձնապես չէր նկատում (տեսնում), որ պետությունը սահմանափակում է մարդու ազատությունները: Նա գտնում է, որ մարդու հոգևոր գործունեությունը կայանում է նրանում, որ պետական կյանքում նա ինքնադրսևորվում, ստեղծագործում, հանդես է գալիս իրավական ու բարոյական նորմերով: «Չէ՞ որ ճշմարիտը համընդհանուր և սուբյեկտիվ կամքի միասնության մեջ է, իսկ համընդհանուրը գոյություն ունի պետությունում, օրենքներում, ընդհանուր և բանական որոշումներում»[63]: Հեգելը պետության մասին բանաձևում է. «**Պետությունը աստվածային գաղափար է, որը գոյություն ունի երկրի վրա** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[64]: Մեկ այլ տեղ նա պետությունը համարում էր «մարդկային կամքի և նրա ազատության դրսևորման հոգևոր գաղափար»[65]: Հեգելը պետության բարեկարգությունը և ուժը տեսնում էր նրանում, «եթե քաղաքացու մասնավոր շահը միանում է նրա ընդհանուր նպատակին»[66]: Բայց նա ընդունում էր նաև, որ ժողովուրդները կարող են ապրել առանց պետության և հասնել նշանակալի զարգացման, մինչև որ կկարողանան հասնել այդ մակարդակին[67]:

Կյանքի օբյեկտիվ ու անհրաժեշտ հրամայականով՝ մարդն իր սուբյեկտիվ ազատության մի մասը տալիս է պետությանը: Պետության և հասարակության կողմից արդարացի օրենքներով ու բարոյականությամբ մարդու ազատության սահմանափակումը օբյեկտիվ, անհրաժեշտ ու հիմնավոր է, քանզի հակառակ պարագայում կարող են տեղի ունենալ վայրի հակումներ, բռնի, քանդիչ ու քայքայիչ գործընթացներ, կամայականության և կրքերի դրսևորումներ, հասարակության և պետության դեգրադացիա և այլն: Ակներև է, որ օրինական պետությունը չի խաթարում, չի բռնանում մարդու (քաղաքացու) սուբյեկտիվ իրավունքների ու ազա-

[61] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 90:

[62] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 91:

[63] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 90. («Ведь истинное есть единство всеобщей и субъективной воли, а всеобщее существует в государстве, в законах, в общих и разумных определениях»).

[64] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 90: («Государство есть божественная идея как она существует на земле»).

[65] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 97: («Государства есть духовная идея, проявляющаяся в форме человеческой воли и ее свободы»).

[66] **Гегель**, Сочинения, т. VIII, М.-Л., 1935, с. 24. («Государство сильно, … если частный интерес граждан соединяется с его общей целью»).

[67] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 108.

տության վրա, հակառակ պատագայում՝ պատմությունից հայտնի է, թե դրան ինչ է հետևում: Այստեղից էլ՝ պետությունը կամ պետականությունը եղել ու մնում է պատմական օրինաչափ զարգացման գործընթացի արդյունքը: Այս կապակցությամբ կուզենայինք նշել, որ գերմանական ազգը առավել պետականամետ ու կարգապահ է, որը կարելի է բացատրել նրա **գենետիկ** հատկություններով, բացի այդ նաև նրանով, որ նրանք մեծապես առաջնորդվել են իրենց մեծ մտածողների գաղափարներով:

Պետության շրջանակներում ազատության հիմնահարցերը մարմնավորում են գտնում տվյալ երկրի սահմանադրության մեջ և կարգավորվում են սահմանադրական նորմերով: Այդ նորմերում կարևոր է, օրինակ, քվեարկողների ձայների հարաբերակցության հարցը, որում փոքրամասնություն ստացած ձայներն իրենց տեղը պիտի զիջեն մեծամասնությանը: Հեգելը գտնում էր, որ դա ամենևին էլ չպիտի համարել ազատության սահմանափակում, ինչպես որ ժամանակին կարծել է ֆրանսիացի մտածող-լուսավորական Ա. Ժան-Ժակ Ռուսոն (1712-1778 թթ.): Հեգելը բերում էր Լեհաստանի օրինակը, երբ նրա սեյմում վճիռներ կայացնելիս յուրաքանչյուր անհատ պետք է տար իր համաձայնությունը, և այդ պետությունը քայքայվեց հենց այդ **ազատությունից**[68]: Բայց Լեհաստանի, ավելի ստույգ՝ Ռեչ Պոսպոլիտայի քայքայման հարցում նման դիտարկումից մենք ձեռնպահ կմնանք՝ արտաքին միջամտության (Լեհաստանը երեք անգամ բաժանվեց Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միապետությունների միջև) հաշվառումով: Լեհական սեյմի վարքագիծն այնքան էլ մեծ դեր չի խաղացել նրա հետագա ծանր ու դժբախտ ճակատագրի համար, որն այդ առումով որոշակի նմանություն ունի հայոց պատմական ճակատագրի հետ:

Խոսելով սահմանադրական պետությունների կառավարման ձևերի մասին՝ Հեգելն ընդհանուր առմամբ ճիշտ էր համարում միապետական, արիստոկրատական և դեմոկրատական կառավարումները: Միաժամանակ, անտիկ հեղինակների օրինակով, Հեգելը ևս սկզբունքորեն իրարից տարբերակում էր **դեսպոտիզմն** ու **միապետությունը**: Ընդ որում, դեսպոտիզմի պարագայում, երբ ամեն ինչ վճռվում էր մեկ անձի կամքով, ավելորդ է խոսել գործող սահմանադրության գոյության մասին[69]:

Ինչ վերաբերում է պետություն և կրոն (եկեղեցի) հարաբերությանը, ապա Հեգելը դրանք դիտարկում էր սերտ կապի մեջ՝ գտնելով, որ **աստ-**

---

[68] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 93:
[69] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 94.

**վածային վախը,** նրա կրոնական մարմիններն ու հաստատությունները **դյուրացնում** են պետության, երկրի ու ժողովրդի **կառավարումը**[70]:

Հեգելը համեմատել է Հին Արևելքի և հունա-հռոմեական դարաշրջանի պետություն հասկացությունը՝ նրանց կողմից ազատության ընկալման տեսակետից: Նրա դիտարկմամբ՝ Արևելքի ժողովուրդների մոտ կարելի է գտնել նահապետական կյանքի հիանալի պատկերներ, որտեղ կառավարել է տոհմի կամ ցեղի առաջնորդը (ավագանին), և ժողովուրդը նվիրված է եղել նրանց, իսկ հույների և հռոմեացիների մոտ առկա են եղել ժողովրդական լայն **ազատություններ**, որտեղ պետական կառուցվածքն այնպիսին էր, ուր բոլոր քաղաքացիներն անմիջական մասնակցություն ունեին երկրի ընդհանուր գործերի, օրենքների ու որոշումների կայացման գործում: Եվ հենվելով Հեգելի մտքերին՝ դրանք վերապատմելով՝ շարունակենք, որ հունա-հռոմեական այդ սկզբունքը, փաստորեն, «մնում է նույնը՝ այն տարբերությամբ, որ այժմ մեր պետությունները շատ մեծ են, իսկ քաղաքացիները՝ մեծաթիվ, ուստի որոշվելիք հասարակական գործերում քաղաքացին իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակի, այլ անուղղակի, ժողովրդական ներկայացուցչության, այսինքն՝ պատգամավորների միջոցով: Եվ պատգամավորը հանդիսանում է ոչ թե սուբյեկտիվ, այլ ընդհանուրի կամքի արտահայտողը»[71]: Այսպիսով, պետության և ազատության հարաբերակցության հարցում Հեգելն ուղենշում էր երկու պահ, այն է՝ «առաջին՝ ազատության գաղափարը՝ որպես բացարձակ վերջնական նպատակ, երկրորդ՝ այն միջոցը, որը տանում է այդ նպատակին հասնելուն»[72]:

Ըստ Հեգելի՝ «Համաշխարհային պատմությունը, ընդհանրապես, ոգու դրսևորումն է **ժամանակի** մեջ՝ նման այն բանին, ինչպես որ գաղափարը, ինչպես բնությունը դրսևորվում է **տարածության** մեջ»[73]: Նա համաշխարհային պատմության շարժիչ ուժը համարում էր համաշխարհային ոգին: Նույն կերպ նշում էր բնության, մարդկային, հոգևոր և այլ ոգիների մասին, որոնք էլ, ըստ նրա, հանդիսանում են կյանքի և պատմության իմաստը: Անցյալում կատարվածը՝ որպես ոգու արտահայտություն, չի մեռնում, նա միշտ կա ինքն իրեն, ինքն իր համար: Ոգին միշտ առկա է ներկայի մեջ, բայց ընթանում է աստիճանական շրջապտույտով դեպի վեր[74]:

---

[70] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 100:
[71] **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 98:
[72] **Гегель Г.**, նույն տեղում:
[73] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 119.(«Всемирная история есть вообще проявление духа во **времени**, подобно тому как идея, как природа, проявляется в **пространстве).**
[74] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 125.

Այսինքն՝ Հեգելը տեսնում էր կապը անցյալի և ներկայի միջև աստիճանական զարգացումով՝ թեկուզև ոգու կամ գաղափարի ձևով:

Այս համատեքստում ևս Հեգելը նախ ընդգծում է աշխարհի՝ շարունակ փոփոխվելու հանգամանքը: «Այժմ, եթե մենք հայացք նետենք համաշխարհային պատմության վրա՝ ընդհանրապես,- գրում է Հեգելը,- ապա կտեսնենք գործերի ու փոփոխությունների վիթխարի պատկեր՝ անհատների, պետությունների, ժողովուրդների ձևավորման անվերջանալի բազմազանություն, որոնք մեկը մյուսի հետևից անդադար ի հայտ են գալիս»[75]: Եվ այդ բազմազան ու բազմաշերտ գործողություններում առաջին պլանում են պետությունները, անհատները և ժողովուրդները, որոնք, որոշակի ժամանակաշրջանում հասնելով մեծ արդյունքի, պատմական առաջնության դափնուն՝ նորացվելով որպես ավելի մաքուր ոգի, այն հաջորդաբար զիջում են ուրիշի: Եվ իր այս դատողությունը հիմնավորելու նպատակով Հեգելը դիմում է ընթերցողին, որպեսզի վերջինս հայացք նետի տակավին պահպանվող նախկին հոյակերտ կոթողներին, դրանց ավերակներին: Նա մտաբերում է Կարթագենի, Պալմիրայի, Պերսեպոլիսի, Հռոմի ավերակները՝ գտնելով, որ դրանցում ամբարված են երբեմնի զորեղ թագավորությունների ու նախկին լիաուժ և հարուստ մարդկանց տխուր ուրվապատկերները: Եվ պատմության շարունակական փոփոխությունն արտահայտվել է նրանով, որ, կյանքի և մահվան տրամաբանությամբ, դրանց բնական **մահվանը** հաջորդում է նորերի **կյանքը** ու այդպես՝ հաջորդաբար: Եվ այդ ամենը կատարվում է **ոգու** միջոցով, որն ինքն իրեն դուրս է գալիս իր հին մարմնական պատյանից, ինչպես փյունիկը՝ փոշուց, հարություն առնելով՝ ստանում ոգու նորացված բովանդակությունը[76]:

**Հեգելը խոսում է ժողովրդի, ազգի ոգու մասին**: Նրա մեկնությամբ՝ հատուկ ոգի է գործում նաև ժողովրդի մեջ, որի միջոցով արարվում է նրա իրական աշխարհը՝ իր կրոնով, իր պաշտամունքով ու սովորույթներով, պետական կառուցվածքով ու քաղաքական օրենքներով, բոլոր հիմնարկներով, մի խոսքով՝ նրա բոլոր գործերով ու գործողություններով. «Ժողովուրդները ըստ էության այն են, ինչը որ նրանց գործողություններն են»[77]: Հեգելյան սույն դատողությունից կարելի է հետևեցնել, որ այս կամ այն ազգ-ժողովրդի էության ու բովանդակության մասին կարելի է պատ-

---

[75] **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 119:

[76] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 120-121:

[77] Տե՛ս **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 121.(«Народы суть то, чем оказываются их действия»).

կերացում կազմել նրա հավաքական գործողություններից: Սակայն Հեգելի ասածը չպետք է բառացի հասկանալ, որովհետև քաղաքականությունը իրականացնում է ոչ թե ժողովուրդը, այլ կառավարությունը: Սակայն կառավարության գործունեության բովանդակությունը երևում է նրանից, թե ընտրությունների ճանապարհով տվյալ ժողովուրդն ինչպիսի կառավարություն է ձևավորել: Ֆրանսիացի լուսավորական Շ. Մոնտեսքյոն (1689–1755 թթ.) Հեգելից դեռ շատ առաջ նկատել էր տալիս, որ պետության օրենսդրությունը պետք է հետևի «ազգի ոգուն» և չպետք է հակասի կառավարման սկզբունքներին[78]:

Ուսանելի է նաև ազգ–ժողովրդին վերաբերող հետևյալ միտքը. «Ժողովուրդը կարող է մահանալ բռնի մահով միայն այն դեպքում, եթե նա բնականորեն, ինքն իրեն մեռած է դարձել»[79]: Այս մտքի պարադիգման այն է, որ **եթե ժողովուրդը չի ուզում մեռնել, ապա բռնությամբ չի մեռնի**: Սա բնութագրական է ու կարելի է տարածել հայ ժողովրդի վրա, որովհետև նրա հանդեպ ինչպիսի բռնություններ էլ որ կիրառվել են, միևնույն է, նա շարունակել է պայքարել ու ապրել:

Հեգելի դիտարկմամբ՝ համընդհանուր ոգին, առավել ևս՝ ժողովրդի ոգին, հենց այնպես բնական մահով չի մեռնում, այլ հարմարվում է կյանքին և պատկանում համաշխարհային պատմությանը: Ժողովրդի ստեղծագործ ոգին, ինքն իրենով որպես գաղափար, դրսևորվում է գիտակցության, մտածողության միջոցով, որի արդյունքում ձևավորվում է պետությունը, զարգանում է գիտությունը, իրավական նորմերը, բարոյականությունը, մշակույթը, տեխնիկական կարողությունները և այլն[80]: Դժվար չէ տեսնել, որ հեգելյան դատողությունները կապված են իրական ու բնական կյանքի հետ, վերաբերում են էվոլյուցիոն զարգացմանը՝ այն տարբերությամբ, որ նրա մոտ դարձյալ գործում է **ոգու** գաղափարը տարբեր ոգիների ձևով՝ լինի բացարձակ, թե՝ համաշխարհային, բնության, մարդկային, ազգային, թե ժողովրդի՝ իբրև ամեն ինչի նախասկզբի ու շարժիչ ուժի: Հեգելի պատկերած ոգու մեջ ամենագնահատելին մարդու մտածողության ու գիտակցության կողմից ազատության գաղափարի գիտակցումն է, որն աշխարհն ու մարդկությունը տանում է օրինաչափ առաջընթացի ուղիով:

---

[78] Տե՛ս **Եփրեմյան Տիգրան**, Ազգերի ինքնորոշման իրավունքի պատմական հետազիծը, «Վէմ», Եր., 2016, N 4 (հոկտեմբեր–դեկտեմբեր), էջ 15:

[79] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 122. («Народ может умереть насильственной смертью лишь в том случае, если он естественно сам по себе стал мертвым»).

[80] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 112 և 121.

Ժողովրդի ոգու վերաբերյալ Հեգելը բերում է այն օրինակը, որ եթե մենք ուզում ենք պատկերացում կազմել հույների մասին, ապա դա կգտնենք Սոֆոկլեսի և Արիստոտելի, Թուկիտիդեսի և Պլատոնի մոտ: Այդ անհատների մեջ մտքերի ձևով թևածում է հունական ոգին[81]: Հեգելի ասածի նմանությամբ՝ կարելի է ասել, որ հայերի ազգային ոգին մենք կարող ենք գտնել Խորենացու, Նարեկացու, Աբովյանի, Ռաֆֆու, Թումանյանի և մյուս հայ մեծերի ստեղծագործություններում՝ մտքերի, գաղափարների, քառյակների, պոեմների, վեպերի, պատկերների և այլ ձևերով:

Հեգելի մտածելակերպում ինքնատիպն այն է, որ եթե, սովորաբար, ընդունված է ասել, որ կյանքին հաջորդում է մահը, նրա մոտ, ընդհակառակը, «կյանքը ծագում է մահից՝ իբրև սուբստանցիոն սկիզբ (հիմք): Բայց նորի ծնունդը նոր, ավելի բարձր ձևեր է ստանում՝ մասամբ պահպանելով հինը, մասամբ վերափոխելով (կերպափոխելով) այն[82]: Հեգելի մեկնաբանությամբ՝ ոգին մտածողության ձևով ընթանում է ժամանակի մեջ, սակայն կեցության (գոյի) մեջ ստանում է նոր էություն, ավելի բարձր ու հարուստ բովանդակություն: Եվ այդ անցումը Հեգելը համարում է պատմությունը հասկանալու գործուն մեխանիզմ (բանալի): **Այդ ընթացքում անհատի կամ ժողովրդի մեջ գաղափարը՝ որպես ոգի, անցնում է աստիճանական փոփոխությունների, բայց, որպես կանոն, առաջ ընթանալու, առաջադիմելու ուղիով**: Եվ դա նա համարում էր պատմության փիլիսոփայական ընկալման կարևորագույն միջոցը[83]: Հեգելը պարզաբանում էր, որ անհատների և ժողովուրդների, նաև պետությունների և այլ կառույցների ու համակարգերի առաջացման սկիզբը և հասունացման արդյունքը, ինչպես պտուղը, իրար չեն համընկնում, տարբեր են լինում. վերջինս, բնականաբար, որակապես լինում է ավելի բարձր ու կատարյալ: Քանի որ, ըստ նրա, ոգին անմահ է, ուստի մենք փիլիսոփայորեն ուսումնասիրում ենք ներկան՝ հասկանալու համար, թե նախընթաց պատմությունը **հետադարձ դիտարկման մեթոդով** հաջորդական զարգացման ինչ աստիճաններ է ունեցել, իսկ ներկա կյանքի ոգին ևս կարծես իրար կողքի դասավորված շրջանաձև աստիճաններ է՝ կապված իրական ներկայի և մտովի անցյալի հետ[84]:

Այսպիսով՝ Հեգելի մեկնաբանությամբ՝ ժողովուրդների պատմությունը նմանվում է էստաֆետի, երբ մի ժողովուրդ **ոգու** կողմից ազատության

---

[81] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 123.
[82] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 124
[83] Տե՛ս **Гегель Г.**, նույն տեղում:
[84] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 125.

ձեռքբերման ու գիտակցման բարձրագույն կետին հասնելուց և իր պատմական կոչումը վայելելուց հետո իջնում է պատմության թատերաբեմից՝ իր տեղը զիջելով մեկ ուրիշ ժողովրդի, բայց, ընդհանուր առմամբ, նպաստ բերելով մարդկանց ու աշխարհի զարգացմանը (առաջընթացին), լավին ու կատարյալին: Այս ձևով, օրինակ, կարելի է մատնանշել Հին Եգիպտոսի, Բաբելոնի, Հին Հունաստանի և Հռոմի պատմությունների փոխնեփոխ վերելքներն ու վայրէջքները, պետական կառուցվածքի և դեմոկրատիայի իրենց մակարդակներով և այլն:

## 5. Համաշխարհային պատմության մասին հեգելյան դիտարկումները՝ ըստ աշխարհների, երկրների ու ժողովուրդների

Իր աշխատության երկրորդ՝ մեծ հատվածում, Հեգելը պատմության հարցերին մոտենում է ոչ այնքան որպես փիլիսոփա, որքան, ավելի հաճախ՝ իբրև պատմաբան՝ ըստ աշխարհների, քաղաքակիրթ երկրների, երկրամասերի ու ժողովուրդների՝ մասին իր մեկնաբանություններով, նկարագրություններով, դիտարկումներով ու գնահատականներով:

Ինչպես բոլոր բնափիլիսոփաները, նա ևս կարևորում է **աշխարհագրական գործոնի** դերը պատմության մեջ, սակայն՝ իբրև **ոգու** զարգացմանը նպաստող հիմք[85]: Հատկապես ընդգծվում է Հեռավոր ու Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում գետերի խաղացած նշանակալի դերը[86]:

Հեգելն իր աշխատության այս ընդարձակ հատվածում համաշխարհային պատմությունը տրոհել է ըստ կառավարման ձևերի՝ 1. **բռնապետություն** (դեսպոտիզմ), 2. **դեմոկրատիա և արիստոկրատիա** և 3. **միապետություն**[87]: Պատմությունը, ըստ կառավարման երեք ձևերի, բաժանելու հիմքում դրված է եղել **պետություն** հասկացությունը, որպես ընդհանուր, աստվածային, հոգևոր գաղափար ու կյանք, ուստիև Հեգելը դրանք հաջորդաբար ներկայացնում է Հեռավոր Արևելքից դեպի Մերձավոր Արևելք, իսկ հետո՝ Հին Հունաստան և Հին Հռոմ:

Ինչպես արդեն ասվել է, հին (անտիկ) դարաշրջանում **Արևելյան աշխարհի** սկզբում եղել են առասպելներն ու ավանդապատումները, ուր բացակայել է իրական պատմությունը: Այստեղ թեոկրատական կառավարման ձևի պայմաններում նոր-նոր գործելիս են եղել ընդհանրական

[85] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 126.
[86] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 156:
[87] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 148.


ՎԻՄ հանրակրթական հանդես, ՀՀ (ՊԲ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

լեզուն և բարոյական նորմերը: Խոսքը վերաբերել է Ասիական սարահարթի և Սիբիրի **նոմադական** (քոչվորական) կյանքով ապրողներին, ովքեր դեռ անցում չէին կատարել «**պատմական հողի վրա** (ընդգծումը մերն է–Ա. Հ.)»[88]: Մինչդեռ, ըստ Հեգելի դիտարկման՝ ավելի հարավ գտնվել են ավելի կազմակերպված պետությունները՝ Չինաստանը և Հնդկաստանը[89]: Բայց նա, ըստ ամենայնի, իրավացիորեն գտնում է, որ այդ պետությունները հայտնվել են համաշխարհային պատմությունից մի տեսակ դուրս, մեկուսացված վիճակում, որը կարելի է բացատրել նրանց աշխարհագրորեն Մերձավոր Արևելքից ու Եվրոպայից շատ հեռու գտնվելու հանգամանքով, ինչպես նաև փակ, ինքնամփոփ կենցաղ–ապրելակերպով, կրոնով ու սովորույթներով: Հեգելն, իր հերթին, համեմատել է չինական և հնդկական պետությունները՝ նշելով հնագույն ժամանակներից չինական կայսրությունների հարստություններն ու հարուստ պատմությունը: Իսկ Հնդկաստանի վերաբերյալ նա մի տեսակ ձեռնպահ է մնում՝ դա մասամբ բացատրելով հնդկական պետության հիերարխիկ (կաստայական) կառուցվածքով[90], բազմակնությամբ, երկրի ներսում իրավունքների և պարտականությունների կտրուկ հակադրություններով և այլն[91]: Օրինակ՝ կաստաներից բարձրագույնը համարվող Բրահման դիտվում էր որպես աստված, մինչդեռ հասարակ ծագման մարդը անգամ չէր կարող նայել արևածագը, անձրևի ժամանակ փողոց դուրս գալ, կամ նայել կնոջը, երբ նա ճաշում էր, լողանալիս չպետք է լրիվ մերկ լիներ և այլն[92]: Սա հիշեցնում է հայ իրականության հետ կապված այն դրվագը, երբ, օրինակ, պարսկական տիրապետության շրջանում Երևանի խանը պահանջում էր, որ «յաւուրս անձրևի քրիստոնիայք մի ելցեն արտաքս»[93]:

Դրա փոխարեն, Հեգելն ընդգծում էր հնդկական **Վեդաների**, «**Ման**» կոչվող օրենքների ժողովածուի, գրականության և արվեստի հարուստ գանձերը՝ չմոռանալով չինական ինքնատիպ փիլիսփայությունը, **Կոնֆուցիուսի** (551–479 թթ. մ. թ. ա.)՝ քրիստոնեականի համեմատ ավելի նրբանկատ վարվեցողությունը, իմաստնությունը, չինական բարոյականությունը

---

[88] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 156:
[89] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 157:
[90] Հին Հնդկաստանում գոյություն է ունեցել չորս՝ Բրահմանների (հինդու հոգևոր բարձրագույն դաս), Կշատրիների (զինվորականների), Վայշերի (առևտրականների) ու Շուդրաների (աշխատավորների) դաս:
[91] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 110–111 և 184–185:
[92] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 189–190:
[93] **Զաքարեայ Սարգաւագի** Պատմագրութիւն, մաս II, Վաղարշապատ, 1870, էջ 90:

և այլն[94]: Հեգելը խոսում է **Բուդդայական** կրոնի (Բուդդիզմի) մասին, որը լայն տարածում է ունեցել Հեռավոր Արևելքում՝ ընդգրկելով Մոնղոլիայից մինչև Հնդկաստան, Հնդկաչին ու Ցեյլոն: Նա նշում է, որ մոնղոլների մոտ ևս կար բուդդիզմ, որը, սակայն, հանդես էր գալիս **լամայականության** ձևով: Վերջինս դուրս է մղում **շամանականությանը**՝ իբրև կախարդանքի կրոն: Այնտեղ մարդիկ սնվելիս են եղել գերազանցապես բույսերով և այլն[95]: Սա ցույց է տալիս, որ Հեգելը խորությամբ ծանոթ է եղել չին-հնդկական հին պատմության դրվագներին, օգտվել դրանց գրավոր և նյութական հուշարձաններից:

Հեգելն առանձին բաժնով անդրադարձ է կատարել Պարսկաստանին՝ նշելով, որ այնտեղ էլ ի սկզբանե, թեոկրատական կառավարման սկզբունքը ստացել էր միապետության տեսք, որն իր բարեգութ իշխանության տակ էր վերցրել բազմաթիվ ժողովուրդների (հավանաբար նկատի է ունեցել նաև Հայաստանն ու հայերին)[96]: Հեգելը ռասայական առումով Առաջավոր Ասիան տարանջատում է Հեռավոր Արևելքից (Չինաստան, Հնդկաստան, Մոնղոլիա, նշելով, որ այն պատկանում է եվրոպական ռասային: Նա հատուկ ընդգծում է Պարսկաստանի խաղացած դերը պատմության մեջ: Նրա բնորոշմամբ՝ «**Պարսիկները հանդիսանում են առաջին պատմական ժողովուրդը** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[97]:

Բնականաբար, փիլիսոփա Հեգելն ավելի մեծ ուշադրություն պիտի դարձներ պարսկական հավատալիքներին ու կրոնին: Նա նշում է, որ այնտեղ է առաջինը զենդական լեզվով լույս տեսել իրանական փիլիսոփայական մտքի հուշարձան համարվող «**Զենդ Ավեստան**» (Зороастра)՝ աշխարհի և ոգու ճանաչման մասին: Դրանում խոսվում էր բարու և չարի, եզակիի ու ընդհանուրի, ֆիզիկականի ու հոգևորի, բնության սկզբնավորման, մարդու բնությունից ազատագրման և այլ կիսափիլիսոփայական ընկալումների ու պատկերացումների մասին[98]: «Ավեստայում» ներկայացված է Որմիզդը՝ որպես լույսի, բարու աստված, իսկ Ահրիմանը՝ մթի, չարի աստված: Հիշեցնենք, որ գերմանացի շատ փիլիսոփաների տեսադաշտում են եղել պարսկական հարուստ կրոնա-աստվածաբանական, հոգևոր մշակութային արժեքները, որոնց քննության ու վերլուծու-

[94] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 118.
[95] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 204 և 207.
[96] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 157:
[97] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 209. («Персы являются первым историческим народом»).
[98] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 210:

թյունների հիման վրա նրանք զարգացրել են փիլիսոփայական առանձին տեսություններ և ուղղություններ:

Կրկին դառնալով բուն նյութին՝ նշենք, որ, աշխարհագրական դիրքի առումով, Հեգելը նկարագրում է Իրանական սարահարթը, Պարսից ծոցի ափամերձ հատվածում գտնվող շատ կարևոր Ֆարս կամ Պարս նահանգը, որից էլ ծագել է երկրին տրվող Պարսկաստան ընդհանուր անվանումը: Այնուհետև նա նշում է Պարսկաստանից հյուսիս ընկած Քրդաստանի և առաջին անգամ՝ դրանից հյուսիս գտնվող **Հայաստանի** մասին[99]:

Հեգելի դասախոսության տեքստի ընթերցումից երևում է, որ նա օգտվել է Հերոդոտոսի, Քսենոֆոնի, Պոլիբիուսի, Տակիտուսի և մյուսների աշխատություններից: Օրինակ՝ Հերոդոտոսից նշում է անում, որ **մեդիացիները** կամ **մարերը** նախկինում կոչվել են **արիացիներ**, որտեղից էլ ծագում է Իրան անվանումը: Ընդ որում, Հեգելը նշում է, որ Պարսկաստանը և Մարաստանը չի կարելի իրարից տարանջատել, որ Աքեմենյան պետության հիմնադիր Կյուրոս Մեծը (550–529 թթ. մ. թ. ա.) եղել է Մարաստանի թագավորի ազգականը, և որ պարսիկները և մարերը միախառնելով իրար՝ Կյուրոս արքան սկսում է արշավանքները դեպի Լիդիա, Բաբելոն, Սիրիա, Եգիպտոս, Փոքր Ասիա և այլուր[100]: Հեգելը Կյուրոս Մեծի ստեղծած կայսրությունը համեմատում է Գերմանական և անգամ Նապոլեոնի կայսրությունների հետ[101]: Եվ, իսկապես, ընդունված է պատմագրության մեջ Կյուրոս Մեծի Աքեմենյան կայսրությունը համարել **առաջին կայսրությունը** համաշխարհային պատմության մեջ:

Ուշագրավ է, որ Հեգելը, Հերոդոտոսի «Պատմություններ» գրքից հղում անելով, նկարագրում է, թե ինչպես «Եփրատ և Տիգրիս գետերով նավերը Բաբելոն էին հասնում մասամբ **Հայաստանից**, մասամբ էլ՝ հարավից և, շնորհիվ դրա, այդ քաղաքում կուտակվել էր անհաշիվ հարստություն»[102]: Հեգելը, տարբեր աղբյուրներից տվյալներ քաղելով, փորձել է ներկայացնել Արևելքի պետությունների սկզբնավորման տարեթվերը՝ իր ժամանակին առկա տեղեկատվության հիման վրա: Օրինակ՝ Չինաստանի պատմությունը թվագրում է Ք. ա. 2357 թ., Եգիպտոսինը՝ 2207 թ., Ասորեստանինը՝ 2221, Հնդկականը՝ 2204 թ.[103]:

---

[99] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 211:
[100] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 212 և 220:
[101] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 221:
[102] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 218. Այդ մասին նաև՝ **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմ. **Ս. Կրկյաշարյանի**, Եր., «Հայկ ՍՍՀ ԳԱ» հրատ., 1986, էջ 79–80):
[103] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 159:

Այս առնչությամբ կարող է հարց առաջանալ, թե արդի փիլիսոփաները որքանո՞վ են իրազեկ պատմությանը, ինչպես, ասենք, Հեգելը: Էլ չենք խոսում պատմության սկզբնաղբյուրներին նրանց տեղյակ լինելու մասին:

Պարսկական հոգևոր մշակույթի պատմությունից Հեգելի ուշադրությունից չի վրիպել **Ֆիրդուսու** (940–1020 թթ.) «**Շահ–Նամե**» ազգային հերոսական պոեմը (էպոսը)՝ բաղկացած 60 հազար (ինչը կասկածելի է – Ա. Հ.) բանաստեղծական տնից: Հեգելը նկարագրում է, որ Ֆիրդուսին ապրել է մ. թ. XI դարում՝ Ղազվինում՝ Մահմուդ Մեծի պալատում: Ինչպես մյուս առասպել–հերոսապատումներն ու ավանդազրույցները, նույնպես և «Շահ–Նամեն» Հեգելը չի համարում պատմական սկզբնաղբյուր, ինչպես որ մեզանում, ասենք, «Սասունցի Դավիթը»: Քանի որ էպոսի բովանդակությունը բանաստեղծական (պոետիկ) է, իսկ նրա հեղինակ Ֆիրդուսին՝ կրոնով մահմեդական: Սակայն դա չի խանգարել, որ հեղինակը պատմական ժամանակի ոգով ներկայացնի իրանական էպոսը, որտեղ գլխավոր գործող անձը Ռուստամն է, իսկ պայքարն ընթացել է Իրանի (բարու աղբյուրի) և Թուրանի (չարի կրողի) միջև[104]:

Հեգելը, ոգու վերաբերյալ իր փիլիսոփայական ուսմունքի համաձայն, նշում է, որ Պարսկաստանում սկսում է ի հայտ գալ բնությունից առանձնացած ազատ ոգու գաղափարը, սակայն, պարսկականի համեմատ, հունականը համարում էր ավելի բարձր և քաղաքական առումով՝ ավելի կազմակերպված: Արևելքի ժողովուրդներից նա նշում է, որ սիրիացիների մոտ ազատ կյանքն արտահայտվել է բավականություն ստանալու իմաստով, փյունիկացիների մոտ՝ ձեռներեցության ու խիզախ ծովագնացության, հրեաների մոտ՝ աբստրակցիաներից (վերացարկումներից) մաքուր մտածողության կրոնի ստեղծման, եգիպտացիների մոտ՝ ներքին ձգտումներով և այլն[105]: Կարծում ենք, որ ընթերցողի համար ավելի հետաքրքիր կլիներ, եթե Հեգելը փորձեր պարզաբանումներ տալ Հին աշխարհի նշանավոր պետություններ Բաբելոնի և Ասորեստանի կործանումների, դրանց բնորոշ ներքին պատճառների մասին:

***

Պատմական էքսկուրս կատարելով՝ Հեգելը Արևելքի երկրների պատմությունների ուրվագծումներից տեղափոխվում է հունական հոգևոր աշխարհ: Ըստ նրա՝ հունական ոգու բարձրակետը հանդիսանում է Աքիլլեսը՝ Հոմերոսի Տրոյական պատերազմում: Հունական ազգային ոգին՝ իբրև

[104] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 217:
[105] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 250:

պոետիկ շրջան, նա սկսում է Աքիլլեսից և ավարտում Ալեքսանդր Մեծով: Երկու դեպքում էլ պատերազմ է ընթացել Ասիայի դեմ, մեկը՝ Տրոյայի, մյուսը՝ Պարսկաստանի, և դրանք, ըստ էության, նա դիտել է որպես քաղաքակրթությունների պայքար[106]:

Արևելքի երկրների գեղարվեստական ստեղծագործությունների քննությամբ՝ Հեգելը հանգում է այն հետևությանը, որ Արևելքի պետություններին բնորոշ էր դեսպոտական (բռնապետական) կառավարումը, դրան հակառակ՝ Հունաստանին՝ դեմոկրատական (ժողովրդավարական), իսկ Հռոմին՝ **արիստոկրատական**, որը Կեսարից հետո դառնում է միապետական[107]: Հեգելը տվյալներ է բերում, զորօրինակ, Կեսարի օրոք սենատորների թիվը մեծացվեց՝ հասնելով մինչև 800, իսկ Օգոստոսը կրճատեց այն՝ հասցնելով 600-ի, ինչը չափազանցություն կարելի է համարել: Մինչդեռ Տրիբունները երկուսն էին, հետո հասցվեց 10-ի[108]:

Հեգելն անդրադարձել է հռոմեա-պոնտական պատերազմներին: Խոսվում է Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորի նվաճումների մասին՝ Տավրիկյան (Ղրիմի) թերակղզուց մինչև Սիրիա ու Միջագետք: Նշված է, որ Միհրդատ զորավարին աջակցություն է ցուցաբերել իր փեսա, **Հայաստանի** (Մեծ Հայքի) թագավոր **Տիգրանը** (Տիգրան II Մեծը): Բայց հետագայում հռոմեական զորավարներ Սուլլան և Պոմպեոսը պարտության են մատնում Միհրդատին, իսկ վերջինս ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին[109]:

Հեգելը «Հռոմեական աշխարհ» բաժնում դարձյալ հատուկ անդրադառնում է Հռոմի համար շրջադարձային՝ մ. թ. ա. I դարի իրադարձություններին, հատկապես՝ միմյանց հակառակորդ երկու անհատականություններ համարվող, կոնսուլներ Կեսարի և Պոմպեոսի անձնական ու քաղաքական մրցապայքարին, մի կողմից՝ Պոմպեոսը Սենատի (Ծերակույտի) հետ միասին՝ իբրև թե հանրապետական կարգը պաշտպանող, իսկ մյուս կողմից՝ Կեսարն՝ իր լեգեոններով և գերազանցող հանճարով[110]: Այդպիսով, ըստ Հեգելի, հռոմեական համաշխարհային տիրապետությունը բաժին հասավ մի դեմքի, և դա պատահական չէր, այլ օրինաչափ ու անհրաժեշտ, քանզի Հանրապետության դեմոկրատական սահմանադրությունն այլևս չէր կարող պահպանվել Հռոմում: Մինչ այդ՝ Կեսարն արդեն տիրել էր Իտալիա-

---

[106] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 253-254:
[107] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 277 և 304:
[108] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 323-324:
[109] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 331-332:
[110] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с.332.

յին, Իսպանիային, Գալլիային, Հունաստանին, 48 թ. Փարսալոսի ճակատամարտում գլխովին ջախջախել իր գլխավոր ախոյան Պոմպեոսին, ամրապնդել իր իշխանությունը Ասիայում և հաղթահանդեսով վերադարձել Հռոմ[111]: Կեսարը 44 թ. Սենատի (Ծերակույտի) կողմից հռչակվում է Հռոմի ցմահ դիկտատոր (dictator aeternus), այսինքն, ըստ էության՝ **կայսր**[112]: Հեգելը քաղվածք է բերել Կեսարի հակառակորդներից Կատոն Ավագից (234–149 թթ. մ. թ. ա.). «Թող անիծվեն Կեսարի խիզախությունները այն բանի համար, որ դրանք «խորտակեցին իմ հայրենիքը»: Մինչդեռ դրան հակառակ՝ Հեգելը գտնում էր, որ հանրապետության վերացումը պատահականություն չէր, այլ՝ **անհրաժեշտություն** (ընդգծումը մերն է – Ա. Հ.)[113]:

Մինչդեռ Հին Հռոմի պատմության լավագույն մասնագետ Թ. Մոմզենի կարծիքով՝ Հ. Կեսարի և Գ. Պոմպեոսի հակամարտությունն ընթանում էր ոչ այնքան **հանրապետական** և **միապետական** կուսակցությունների երկընտրանքի միջև, որքան դա պայքար էր Հռոմեական **կայսերական թագին** տիրելու համար[114]:

Ինչևէ, այս բաժինը Հեգելն ամփոփում է նրանով, որ 44 թ. մարտի 15-ին Սենատում «Կեսարի սպանությունը, վերջին հաշվով, ոչինչ չփոխեց»[115]: Կասկած չկա, որ Հռոմի պատմությունը ներկայացնելիս Հեգելը մեծապես օգտվել է Պոլիբիուսի, Պլուտարքոսի, Տակիտուսի, Սվետոնիուսի և այլոց աշխատություններից, Կատոնի և Ցիցերոնի ճառերից, «Աստվածաշնչից», Ստոիկների երկերից և այլն:

Շատ չխորանալով պատմությանն և կրոնին վերաբերող հարցադրումների ու մեկնաբանությունների մեջ՝ հարկ է նշել, որ Հռոմեական կայսրության հզորության թուլացման, բաժանման և, վերջին հաշվով, կործանումների գործում, իբրև ներքին հոգևոր պատճառ, կարելի է ասել, բացասական դեր է կատարել քրիստոնեությունը՝ իր մեղմ ու հանդուրժող գաղափարախոսությամբ՝ ի տարբերություն ավելի ռազմատենչ ու ագրեսիվ մահմեդականության[116]: Սոցիալական առումով՝ քրիստոնեությունը խարխլեց ստրկատիրության հիմքերը, քանզի քրիստոնեական

---

[111] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 332–333:

[112] Տե՛ս **Սվետոնիոս Գ.**, Տասներկու Կեսարների կյանքը, Եր., «Հայաստան» հրատ., 1986, էջ 471:

[113] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с.333.

[114] Տե՛ս **Моммзен Т.**, История Рима, т. III, М., «Гос. издать», 1941, с. 289.

[115] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с.334.

[116] Տե՛ս **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, 2005, с. 351-352, 374 և այլն:

պաշտամունքով մարդը հայցում է Աստծուն, իսկ Աստված ուզում էր, որ **բոլոր մարդիկ փրկվեն**[117]:

Քանի որ, ըստ Հեգելի, մարդու հոգևոր աշխարհը (ոգին) ինքն իր համար ազատ է, ուստի կրոնի, տվյալ դեպքում՝ քրիստոնեության պարագայում, մարդու սուբյեկտիվ ազատությունների սկզբունքում կատարվում է փոփոխություն, այն է՝ նրա ազատության մի մասը՝ իբրև բանականություն, մտածողություն, սիրո, հավատի ձևով նվիրվում է աստվածային ոգուն և էությանը[118]:

## 6. Դիտարկումներ «Գերմանական աշխարհի» մասին

Հեգելի աշխատության վերջին մասը նվիրված է իր հարազատ գերմանական աշխարհին: Նա գերմանական ոգին համարում էր «նոր աշխարհի ոգին»[119]: Գերմանական ժողովուրդների նշանակությունը կայանում էր նրանում, որ նրանք դարձան քրիստոնեական սկզբունքների կրողը: Նա դատողություններ էր անում, որ «Հոգևոր ազատության ու հաշտվողականության սկզբունքները, դրված էին պարզամիտ, տակավին չլուսավորված գերմանական ժողովուրդների հոգիներում, և նրանց վրա խնդիր էր դրված ոչ միայն ընդունելու իսկական ազատության հասկացությունը՝ որպես կրոնական սուբստանցիա՝ համաշխարհային ոգուն ծառայելու ժամանակ, այլև ազատորեն ստեղծագործել աշխարհում՝ ելնելով սուբյեկտիվ ինքնագիտակցությունից»[120]:

Հեգելը գերմանական աշխարհի պատմությունը որոշակիորեն առանձնացնում է հունական և հռոմեական պատմությունից: Սակայն դրա հետ միաժամանակ՝ նշում, որ գերմանական ժողովուրդները, արագ հասունանալով, յուրացրին հռոմեական պատրաստի մշակույթը, կրոնը և փիլիսոփայությունը, լատիներենը, պետականության կառույցը և հետագայում այդ սկզբունքների իրացումով և լատինականի, նաև աշխարհիկի ու կրոնականի միախառնումով, կարծես վերականգնվեց միջնադարյան ֆեոդալական դարաշրջանին բնորոշ Հռոմեական կայսրությունը՝ արդեն այլ

---

[117] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 351–352:
[118] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 352–353:
[119] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 361:
[120] **Гегель Г.,** նույն տեղում («Принцип духовной свободы, принцип примирения был заложен в простодушных, еще не просвещенных душах германских народов, и на них была возложена задача не только принимать понятие истинной свободы за религиозную субстанцию при служении мировому духу, но и свободно творить в мире, исходя из субъективного самосознания»).

ոգով ու որակով[121]: Դրա դրսևորումներից մեկը հաղիսացավ Լևոն III Պապի կողմից 800 թ. թագադրված Կառլոս Մեծի (768–814 թթ.) Սրբազան Հռոմեական կայսրությունը: Կառլոս Մեծի ֆրանկական Կարոլինգների Հռոմեական կայսրությունը, որը տարածականորեն գործնականում ընդգրկում էր Ֆրանսիայի, Հյուսիսային Իտալիայի և Գերմանիայի տարածքները, 843 թ. Վերդենյան պայմանագրով բաժանվեց Կարլոս Մեծի սերունդների միջև:

Հեգելի կողմից միջնադարյան Եվրոպայի, գերմանական աշխարհի օրինակով, պետաիրավական, արտադրա-տնտեսական, կրոնա-դավանաբանական հարցերի քննություն-դիտարկումներից կարելի է հետևեցնել, որ Եվրոպայում որոշակիորեն գոյություն է ունեցել ձևավորված **ֆեոդալիզմի. համակարգ**՝ իր սոցիալ-տնտեսական, արտադրական և պետաքաղաքական հիերարխիկ կառուցվածքով[122]:

Հեգելի քննության հաջորդ հարցը հանդիսացել է եվրոպական **Ռեֆորմացիան**, որն ուղղված է եղել եկեղեցու, նրա այլասերման դեմ[123]: Նրա դիտարկմամբ՝ եկեղեցին բարեփոխելու պատճառներից էին եկեղեցականների ագահությունը, մեղքերի թողության համար բարձր դրամական վճարները, հոգևորականների՝ բարոյական նորմերից շեղումները, կրթության վերահսկումը եկեղեցու կողմից, դրա հանձնումը ճիզվիտներին, մարդու ազատության սահմանափակումը, ինկվիզիցիայի ուժեղացումը, գիտության առաջընթացին խոչընդոտելը և այլն: Հեգելը բերում է աստղագետ գիտնականներ Ն. Կոպեռնիկոսի (1473–1543 թթ.) և Գ. Գալիլեյի (1564–1642 թթ.)՝ եկեղեցու և անձամբ Հռոմի պապի կողմից հետապնդվելու և հալածվելու օրինակները[124]: Նա թվարկում և մեկնաբանություններ է տալիս կաթոլիկ եկեղեցու ներսում առաջացած՝ առանձին ընդդիմադիր դավանաբանական ուղղությունների՝ բողոքականության, լյութերականության, բաբտիստների, անգլիկանության և այլնի վերաբերյալ: Հեգելը բարձր է գնահատել Լյութերին, ով առաջին անգամ գերմաներեն թարգմանել է «Աստվածաշունչը»[125]: Բացի այդ, նա գտնում էր, որ «Լյութերը հասավ մարդու հոգևոր ազատության գաղափարին»[126]:

---

[121] Տե՛ս **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 362:
[122] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 383–419:
[123] Տե՛ս **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 420. Նրա աշխատությունում Վերածնունդի (Ռենեսանսի) դարաշրջանին հատուկ անդրադարձ չկա:
[124] Տե՛ս **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, 2005, с. 421-426.
[125] **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 424..:
[126] **Գեգել Գ**., նշվ. աշխ., էջ 443:


ՎԻՄ հասարակական հանդես, ՀՀ (ՊԲ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

Ըստ Հեգելի՝ Ռեֆորմացիան սկսվել է Գերմանիայում և ընդունվել գերմանական ժողովրդի կողմից, հետո այն տարածվել է սկանդինավյան երկրներում ու Անգլիայում: Դրան հակառակ՝ ռոմանական երկրները՝ Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան և մասամբ Ֆրանսիան, չընդունեցին Ռեֆորմացիան: Վերջիններիս կողմից եկեղեցու վերափոխումների (ռեֆորմների) չընդունելը Հեգելը բացատրում է այդ ժողովուրդների խառնվածքով, բնավորությամբ, ոգու ազատության հարցում երկվությամբ, նաև՝ կաթոլիկ եկեղեցու կողմից նրանց հանդեպ ուժեղ ճնշումներով և այլն: Հեգելը փորձել է ընդգծել գերմանական, մասամբ նաև՝ անգլիական ազգերի մոտ ոգու ազատության ներքին բարձր գիտակցումը: Ինչ վերաբերում է սլավոնական ազգերին, ապա նրանց մոտ դանդաղ ու դժվարությամբ է արմատավորվել սուբյեկտիվ ինքնության հիմնական զգացումը[127]:

Այստեղ չենք կարող անտեսել, որ Հեգելի մոտ դարձյալ դրսևորվում է գերմանական ազգին բարձր դասելու նրա որոշ միտումը, ինչը կարելի է հասկանալ որպես տվյալ ազգի ներկայացուցչի դիրքորոշում և, բնականաբար, ըմբռնումով մոտենալ դրան:

Ինչևէ, Ռեֆորմացիան հիմքեր ստեղծեց անհատի ու հասարակության աշխարհիկ կյանքի և լուսավորականության գաղափարների տարածման ու ամրապնդման համար: Ռեֆորմացիան ազդեցություն է գործել նաև պետականության ինստիտուտի ամրակայման վրա, որը Եվրոպայում աստիճանաբար ստացավ բացարձակ **միապետության** տեսք, ինչպիսին, օրինակ, Ֆրանսիական միապետությունն էր Լյուդիվիկոս XIV-ի օրոք, երբ նա ասում էր, թե «Պետությունը – դա ես եմ»: Սա նաև նշանակում էր, որ եկեղեցին աստիճանաբար հայտնվում էր երկրորդական պլանում՝ ստվերում, թեև եվրոպական պատերազմներն արտաքուստ մղվում էին կրոնա-դավանաբանական քողի տակ, և միաժամանակ հիմքեր էին ստեղծվում **Լուսավորականության** համար:

Հեգելը մեկնաբանում է, որ բողոքականությունը նպաստել է մարդու ներքնաշխարհն ու մտածողությունն ազատելու կրոնական սխոլաստիկ նախապաշարմունքներից. «Եթե մարդը չի մտածում, կնշանակի՝ նա ազատ չէ: Եթե դու մտածում ես, կնշանակի՝ դու կաս, քանի որ բանականությունը սուբստանցիոնալ հիմքն է հանդիսանում ինչպես գիտակցության, նույնպես և՝ արտաքինի ու բնության տարրերի»[128]: Հեգելը կրոնաաստվածաբանականը դիտարկում էր որպես մտածողությունից այնկողմ-

[127] Տե՛ս **Гегель Г**., նշվ. աշխ., էջ 426-427:
[128] **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 441.

նային և դրան հակադրում մաքուր բանական ոգին՝ ինքն իր հետ, ինքն իր համար, այսինքն՝ կրոնից ազատ, անկաշկանդ ոգի՝ իր դրսևորումներով:

Հեգելն ընդունում էր, որ բնության մեջ, աշխարհում, գոյություն ունի բանականություն ու մտածողություն, որի միջոցով էլ քննում և ուսումնասիրում ենք աշխարհի բնական երևույթներն ու գործընթացները: Եվ նա դրան հասնելու ամենաարդյունավետ և հուսալի գործիքներից էր համարում **փորձը**, որովհետև դա օրենքներ հայտնագործելու ոչ աբստրակտ (ոչ վերացական), առավել հասարակ միջոց է[129]:

Աշխատության ամենավերջում Հեգելն անդրադառնում է պատմության՝ իր ապրած վերջին շրջափուլի քննությանը, որը ժամանակային առումով ընդգրկում էր Ֆրանսիական Մեծ հեղափոխության պատմաշրջանը, և նրա պատկերմամբ՝ դա իր արմատական, համաշխարհային-պատմական նշանակության ու դարակազմիկ հետևանքներով համարվում է **նորագույն պատմության** սկիզբը: Ֆրանսիական հեղափոխության իրադարձությունները, մասնավորապես Նապոլեոնի կերպարը իրենց անդրադարձն են ունեցել Հեգելի պատմափիլիսոփայական ձևակերպումներում: Նա ակնարկում է, որ Ֆրանսիական հեղափոխությունը բուռն կերպով նպաստել է աշխարհում փիլիսոփայական մտքի զարգացմանը և, իր հերթին, նրա դիալեկտիկ մտածողությամբ՝ «Ֆրանսիական հեղափոխության ելման կետը եղել է փիլիսոփայությունը»[130]:

Հեգելը խոսում է արդարության և բարոյականության ձգտող **կամքի** և **ոգու** մասին, որոնք իր մոտ տեղ-տեղ համընկնում են: Դարձյալ իր նույն բանաձևով՝ կամքն ազատ է, երբ կախված է միայն ինքն իրենից, ինքն իր համար է. «**Բացարձակ կամքը կայանում է նրանում, որպեսզի լինել ազատ, ցանկանալ ազատ լինելու և դա ցանկանալու մեջ (**ընդգծումը մերն է-Ա Հ)»[131]: Կամքի ազատության հիմքում ընկած են բոլոր տեսակի իրավունքներն ու պարտականությունները, իրավական ձևակերպումները, որոնք, սակայն, պետք է կոնկրետացվեն և գործադրվեն կյանքում: Հեգելը մի տեսակ կշտամբում է գերմանացիներին այն բանում, որ վերջիններս մշակումներ են կատարում տեսական, փիլիսոփայական առումով, իսկ ֆրանսիացիները, հանձինս իրենց հեղափոխության՝ ազատության, անկախության, հավասարության, եղբայրության, իրավունքի, բարոյականու-

[129]Տե՛ս **Гегель Г**., նույն տեղում:

[130] **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 446. (ռուս.՝ «исходным пунктом **французской революции** была философия»).

[131] **Гегель Г**., Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 444. (ռուս.՝ «Абсолютная воля заключается в том, чтобы быть свободным, желать»).


ՎԻՄ համահայկական հանդես, ՀՀ (ՊԵՀ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

թյան մասին կարգախոս-գաղափարները փորձեցին իրագործել պրակտիկայում[132]: Պատմական հենց այդ շրջափուլում իրավունքի, օրենքի, օրինականության հանրային ու պետական պահանջը ծնեց **սահմանադրության** գաղափարը, որն արդեն 1787 թ. սկիզբ էր առել ԱՄՆ-ում:

Հեգելը Ֆրանսիական հեղափոխության կարևորագույն ձեռքբերումը համարում էր պետական համակարգի վերափոխումը, բացարձակ միապետության վերացումը, կառավարման համակարգի ժողովրդավարացումը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրավասահմանադրական ամրագրումը, պետության կողմից սուբյեկտիվ կամքի կառավարումը և այլն: Նա **պետությունը** դիտում էր իբրև սուբստանցիոնալ հիմք, որ «չկա ավելի բարձր և սուրբ մի բան, քան մտածողության պետական կերպի»[133]: Հեգելը ևս հավանություն է տվել եկեղեցին պետությունից անջատելու գաղափարին, քանզի կրոնը մշտապես հակված է հակադրվելու բանական պետական կառուցվածքին[134]:

Հեգելն իր աշխատությունն ավարտում է՝ ամփոփելով, որ ֆրանսիական պետական կառուցվածքի և ազատականության (լիբերալիզմի) սկզբունքները՝ իբրև ոգու կողմից ազատության գիտակցման արտահայտություն, կյանքի ուղեգիր ստացան համաշխարհային պատմության շարունակական զարգացման գործընթացներում[135]:

**Այսպիսով՝** գերմանական դասական փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ Գ. Հեգելը պատմափիլիսոփայական կտրվածքով քննության է ենթարկել մարդկանց, ժողովուրդների, պետությունների, լայն առումով՝ համաշխարհային պատմությունն իբրև գիտակցության միջոցով **ազատության** և առաջընթացի հասնելու տրամաբանական միջոց (ուղի): Հեղինակը փաստական ու փորձնական հենքի վրա տեսական, պատմափիլիսոփայական ասպեկտով քննել ու բացահայտել է համաշխարհային պատմության կոնկրետ փուլերը (էտապները), դրանց մոտավոր ավարտուն պատկերը: Երկրները և ժողովուրդներին նա բաժանել է աշխարհների, հատուկ ընդգծել է պետականության՝ իբրև **աստվածային գաղափարի** դերը, իսկ տարածաշրջանների ժողովուրդներին ներկայացրել է իրենց զարգացման տարբեր մակարդակներով: Իրեն հատուկ զարգացման դիալեկտիկական մեթոդով աշխարհների, երկրների ու ժողովուրդ-

---

[132] Տե՛ս **Гегель Г.**, նույն տեղում:

[133] **Гегель Г.**, Лекции по философии истории, СПб, изд. «Наука», 2005, с. 449. («нет ничего выше и святее, чем государственный образ мыслей»).

[134] Տե՛ս **Гегель Г.**, նույն տեղում:

[135] Տե՛ս **Гегель Г.**, նշվ. աշխ., էջ 455:

ների առաջընթացը ներկայացված է իբրև միասնական գործընթաց՝ յուրաքանչյուրի մոտ տարբեր մակարդակներով և յուրահատուկ դրսևորումներով, որոնք, Հեգելի ձևակերպմամբ, այնուամենայնիվ, ընթացել ու ընթանում են աստիճանական կարգով, շրջանաձև՝ ցածր ձևերից դեպի ավելի բարձրն ու կատարյալը: Համաշխարհային պատմության մասին հեգելյան մտքերն ու դատողությունները բերում են այն հետևությանը, որ **պատմությունը փիլիսոփայորեն ճանաչելի է**: Խնդրո առարկա իր այս աշխատությամբ Հեգելը, կարելի է ասել, հանդես է գալիս իբրև փիլիսոփա-պատմագետ, և նրանում առաջ քաշած տեսական շատ մտքեր ու դատողություններ կարող են ուղեցույց հանդիսանալ թե՛ պատմաբանների և թե՛ ընթերցող լայն հանրության համար: Ընդհանուր առմամբ, Հեգելի փիլիսոփայական համակարգին բնորոշ է բնության, աշխարհի և մարդկային ու հասարակական երևույթների պատմական օրինաչափություններով մեկնության դիալեկտիկական մեթոդը, իսկ մյուս կողմից՝ օբյեկտիվ իդեալիզմն ու բացարձակ ոգու գաղափարը, որոնք հարստացրել են համաշխարհային պատմափիլիսոփայական մտքի գանձարանը:

**Արարատ Մ. Հակոբյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նոր և նորագույն պատմաշրջանների հայ հասարակական-քաղաքական մտքի, հայ քաղաքական կուսակցությունների, Հայաստանի առաջին Հանրապետության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, հայ պատմագրության, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի և բազում այլ հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական և կոլեկտիվ ձեռնարկի ու ուսումնամեթոդական աշխատանքի և ավելի քան 150 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

Summary

## ISSUES OF THE THEORY AND METHODOLOGY OF HISTORY IN THE WORK “LECTURES ON THE PHILOSOPHY OF HISTORY” BY G. HEGEL

**Ararat M. Hakobyan**
*Doctor of Sciences in History*

Key words - history, historiography, philosophy, methodology, consideration, teaching, intelligence, periodization, substance, East, spirit, freedom, nature, personality, Caesar, German peace.

In the rich treasury of philosophical and theoretical thought of Georg Hegel (1770-1831), the largest representative of German classical philosophy, the historical and philosophical consideration of the problems of world history occupied a significant place. In this regard, in his most famous work (lecture) entitled "The Philosophy of History", the author set the task of using a dialectical method to comprehend, consider, and draw substantiated scientific conclusions about the most significant aspects of the development of world history. Hegel's historical and philosophical teaching is an integral part of his philosophical system.

The very introduction to Hegel's work begins with an appeal to the historiography of the world history. According to the historical eras, he distinguishes three forms of historical thinking.

a/ original story,

b/ reflective history,

c/ philosophical history

Prof. Hegel rightly believes that legends (myths), folk songs, and traditions cannot be included in history because they do not yet give a clear idea of unenlightened peoples. He divided reflective history mainly into critical and pragmatic subtypes. With regard to the subtype of reflexive history, Hegel addresses the widely discussed problem of the methodology of history - the repetition of historical events. In this sense, his point of view is interesting: that people do not learn the necessary lessons from their history, differing from the approaches and assessments of many philosophers and historians. "Experience and history teach," he writes, "that people and governments have never learned anything from history and did not act in accordance with the lessons that could be drawn from it" (see G. Hegel, Lectures on the Philosophy of History, St. Petersburg, 2005, p. 61). However, using the example of the history of the Armenian people, it can be shown that the Armenian national and state circles nevertheless often took into account the experience and lessons of history, but not always.

At the heart of the Hegelian system (scheme) of philosophy of history is the awareness of freedom through reason, that "reason or mind governs the world", without which history will turn into chaos, and that the World Spirit moves and works in world history.

According to Hegel's interpretation, the human mind is not only substance, infinite content, complete essence, and truth, but also a subject in itself, not

requiring external materials and means for its final activity, from which the necessary data can be extracted. He takes them all from himself, and he himself is the material, which, by processing it, since it is for itself both its own prerequisite and the absolute final goal, makes the transition from its inner world not only to the world of nature, but also to the spiritual world, i.e. “world history”.

Hegel taught that the primary characteristic of the spirit, among other properties, is freedom, and that all other properties of the spirit exist only thanks to freedom and are means to it; they all seek and generate it. Speculative philosophy "recognizes that freedom is the only true spirit." One of the characteristic features of Hegel’s system was the idea of spirit with its forms of manifestation, which was not some mystical, cosmic concept but a way of expressing the real world, nature, people, and states in their objective, dialectical patterns of development.

Hegel continues the judgments (interpretations) he describes about the connection between the essence of spirit and freedom. If the substance of matter is outside it, then the spirit is in it as a being (spirit is a phenomenon in itself). This is what freedom is, because: “If I am dependent, then I relate myself to something else that I am not; I cannot be without something external; I am free when I am myself. This being of the spirit in itself is self-consciousness, consciousness of itself” (see G. Hegel, Lectures on the Philosophy of History, St. Petersburg, 2005, p. 71). In this sense, world history is also the revelation of the spirit in the form in which it develops through it and contains knowledge about the entire history practically for itself.

Hegel extends his theoretical and philosophical model (concept) to specific countries and peoples. He finds that “the peoples of the East do not yet know that the spirit or man, as such, is himself free, and since they do not know this, they are not free. They only know that one (italics ours-A.A.) is free.” And, according to Hegel, it turns out that the only free person is a despot, a tyrant. On the contrary, according to Hegel, “only the Greeks developed a consciousness of freedom, and that is why they were free. But they, like the Romans, knew only that some were free, and not men as such. Even Plato and Aristotle did not know this.” Here, the existence of slavery is given as an argument in connection with the lives and existence of those countries. And in contrast to all this, Hegel, perhaps trying to emphasize the vision of the high spirit of his nation, singles out only the German people, for whom “freedom of spirit is the main property of its nature (essence)”.

Hegel gave special comments on the role of individual historical persons, peoples and states in history. And in his assessment of statehood, he believed, “The state is a divine idea as it exists on earth” (see G. Hegel, Lectures on the Philosophy of History, St. Petersburg, 2005, p. 90). Elsewhere, he viewed the state as “the spiritual idea of the manifestation of the human will and its freedom.”


Վիմ հասարակական հանդես, ԺԶ (ԻԷ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

Hegel saw the well-being and strength of the state "if the private interest of the citizen is united with his general goal". Regarding the relationship between the state and man, considered as a subject, he gave the following interpretation: as an objective and necessary imperative of life, "man gives part of his subjective freedom to the state." As for the relationship between the state and religion (the church), Hegel considered them in close connection, finding that the fear of God, his religious bodies, and institutions facilitate the management of the state, country, and people.

Speaking about the forms of government of constitutional states, he generally considered monarchical, aristocratic, and democratic governments to be correct. At the same time, following the example of ancient authors, Hegel fundamentally distinguished between despotism and monarchy.

Like all natural philosophers, he also emphasizes the role of geographical factors in history, but as the basis for the development of the spirit. The significant role played by rivers in the Far East, and the Middle East and Africa is especially emphasized.

In this extensive part of his work, Hegel divided world history into three forms of government: 1. dictatorship (despotism), 2. democracy and aristocracy, and 3. monarchy.

Hegel compared the concept of statehood among the peoples of the East and the Greco-Roman peoples of ancient times from the point of view of their perception of freedom. Among the peoples and states of the East, he highly valued the Chinese, Indian, and especially Persian states. According to his definition, "the Persians are the first historical people." By the way, speaking about Iran and the Middle East, Hegel mentions Armenia several times, including the king of Armenia, Tigran.

And among European states and peoples, he singles out the German peoples, perhaps with a tendency towards national veneration, considering them as the "spirit of the new world", spiritually nourished by the rich Greco-Roman culture, quickly assimilating their spiritual culture. and material values, and in the form of the Holy Roman Empire, they brought spirit and quality. And at the very end of the work, Hegel turns to the consideration of the historical stage he experienced, which included the historical period of the Great French Revolution, as the beginning of an epoch-making new history.

In general, Hegel's philosophical system is characterized by a dialectical method of interpreting nature, the world, and human and social phenomena with historical patterns and, on the other hand, objective idealism and the idea of absolute spirit. The dialectical method (thinking) developed by the author runs through the essay of his work "Philosophy of History" as a red thread.

For Hegel, the idea manifests itself in human consciousness as spirit in its various manifestations: human, individual, national, natural, universal, global, absolute, etc. The most valuable thing in the spirit depicted by Hegel is the realization of the idea of freedom by human thinking and consciousness, which leads the world and humanity along the path of natural progress.

According to Hegel, the ultimate goal of the absolute spirit and will is the realization of freedom through reason and the desire to achieve it, leading to the progress of nature itself, the world, and humanity. This was the philosophical meaning of Hegel's formulation of history.

Historical progress is the achievement and realization of freedom by the human spirit. According to Hegel's philosophy of spirit, the development of spirit occurs from one level to another, which in itself presupposes the development of man, states, peoples, the world in general, and world history. In nature and in the world, human intellect and thinking work, through which we consider and study the phenomena and processes of the surrounding world. And one of the most effective and reliable tools for achieving this goal is experience, because it is the simplest and most visual way of discovering laws. In the book, Hegel tried to give a holistic and complete picture of world history, to understand it as a single process of gradual movement and development (process) from lower forms to higher and more perfect ones. Outlining the history of the peoples of the world, he believed that each nation, as an individual, a state, has the pinnacle of its historical calling, like a finest hour, which, after its fulfillment, leaves the stage of history, giving way to another.

Резюме

# ВОПРОСЫ ТЕОРИИ И МЕТОДОЛОГИИ ИСТОРИИ В РАБОТЕ «ЛЕКЦИИ ПО ФИЛОСОФИИ ИСТОРИИ» Г. ГЕГЕЛЯ

**Арарат М. Акопян**

*Доктор исторических наук*

**Ключевые слова** - история, историография, философия, методология, рассмотрение, учение, интеллект, периодизация, субстанция, Восток, дух, свобода, природа, личность, Цезарь, германский мир.

Рассмотрение проблем Всемирной истории заняло значительное место в богатой сокровищнице философско-теоретической мысли Георга Гегеля (1770-1831)- крупнейшего представителя немецкой классической философии. В этом смысле в своей самой известной работе (лекции) под названием «Философия истории» он поставил задачу диалектическим методом осмыслить, исследовать и сделать устойчивые научные выводы о наиболее значимых аспектах мировой истории. Философское учение Гегеля является неотъемлемой частью его философской системы.

Введение в историю Гегель начинает с обращения к историографии всемирной истории. Он разделяет три формы исторического мышления по эпохам:

а) первоначальная история,

б) рефлективная история,

в) философская история.

Гегель справедливо полагает, что легенды (мифы), народные песни, предания не могут быть включены в историю, потому что они не дают ясного представления о непросвещенных народах. Он разделил рефлективную историю преимущественно на критический и прагматический подтипы. При рассмотрении рефлексивной истории Гегель обращается к широко обсуждаемой проблеме методологии истории в смысле повторяемости исторических событий. В этом отношении интересна его точка зрения о том, что народы не извлекают необходимых уроков из своей истории, в отличие от многих философов и историков. «Опыт и история учат, – пишет он, – что народы и правительства никогда ничему не научились из истории и не действовали в соответствии с уроками, которые можно было из нее извлечь» (см. Гегель Г. Лекции по философии истории, СПб, 2005, с. 61). Однако на примере исто-

рии армянского народа можно показать, что хотя армянские национальные и государственные органы учитывали опыт и уроки истории, но делали это не всегда.

В основе гегелевской системы философии истории лежит осознание свободы посредством разума и того, что «разум или ум управляет миром», без чего история превратилась бы в хаос и что Мировой Дух движется и работает в мировой истории.

Согласно трактовке Гегеля, человеческий разум есть не только субстанция, бесконечное содержание, законченная сущность и истина, но и субъект сам по себе, не нуждающийся во внешних материалах и средствах для своей деятельности, из которых можно было бы извлечь необходимую информацию. Он берет их от себя, и сам он есть тот материал, который, перерабатывая себя, поскольку он есть для себя и собственная предпосылка, и абсолютная конечная цель, совершает переход от своего внутреннего мира не только к миру природы, но и в духовный мир, т.е. во «Всемирную историю».

Гегель учит, что первичной характеристикой духа, среди других свойств, является свобода и что все другие свойства духа существуют только благодаря свободе и являются средствами обращения к ней, все они ищут и порождают ее. Умозрительная философия «признает, что свобода – единственный истинный дух». Одной из характерных особенностей философской системы Гегеля была идея духа с его формами проявления, которая была не каким-то мистическим, космическим понятием, а способом выражения реального мира, природы, людей, народов, государств в их объективных, диалектических закономерностях развития.

Гегель продолжает свои рассуждения (интерпретации) о связи сущности духа и свободы. Если субстанция материи находится вне ее, то дух находится в ней как бытие (дух есть явление в себе). Вот что такое свобода: «Если я являюсь зависимым, то отношу себя к чему-то другому, чем я не являюсь; я не могу быть без чего-то внешнего; я свободен тогда, когда я есть у самого себя. Это у себя бытие духа есть самосознание, сознание самого себя» (Гегель Г. Лекции по философии истории, СПб, 2005, с. 71). В этом смысле Всемирная история есть и раскрытие духа в том виде, в котором он через неё развивается и содержит знания о всей истории практически для самой себя.

Гегель распространяет свою теоретико-философскую концепцию на конкретные страны и народы. Он отмечает, что «народы Востока еще не знают, что дух или человек, как таковой, сам свободен, а поскольку они этого не знают, они несвободны. Они знают только, что один (курсив наш - А. А.) свободен». И, по Гегелю, получается, что единственный свободный человек – это деспот, тиран. Напротив, по Гегелю, «только у греков появилось сознание

свободы, и именно поэтому они были свободны. Но они, как и римляне, знали только, что свободны некоторые, а не человек как таковой. Даже Платон и Аристотель этого не знали». Здесь в качестве аргумента приводится существование рабства в этих странах. И в противовес этому Гегель, быть может, стремясь подчеркнуть видение высокого духа своей нации, выделяет лишь немецкий народ, для которого «свобода духа есть главное свойство его природы (сущности)».

Гегель дал комментарии роли отдельных исторических лиц, народов и государств в истории. И в своей оценке государственности он считал: «Государство есть божественная идея как она существует на земле» (Гегель Г. Лекции по философии истории, СПб, 2005, с. 90). В другом месте он рассматривал государство как «духовную идею проявления человеческой воли и ее свободы». Гегель видел благополучие и силу государства в том, что «…частный интерес гражданина соединяется с его общей целью». Относительно взаимоотношений государства и человека, рассматриваемого в качестве субъекта, он дал следующее толкование: как объективный и необходимый императив жизни «человек отдает часть своей субъективной свободы государству». Что касается отношений между государством и религией (церковью), Гегель рассматривал их в тесной связи, находя, что страх Божий, религиозные органы и учреждения облегчают управление государством, страной и народом.

Говоря о формах правления в конституционных государствах, он считал правильными монархические, аристократические и демократические правительства. В то же время, следуя примеру античных авторов, Гегель принципиально различал деспотизм и монархию.

Как и все натурфилософы, он подчеркивает важную роль географических факторов в истории, но как основу развития духа. Особо подчеркивалась значительная роль рек на Дальнем и Ближнем Востоке, в Африке.

В этой обширной части своего труда Гегель разделил мировую историю по формам правления: 1. диктатура (деспотизм), 2. демократия и аристократия и 3. монархия.

Гегель сравнивал понятие государственности у народов Востока и греко-римских народов античной эпохи с точки зрения их восприятия свободы. Среди народов и государств Востока он с этой точке зрения высоко ценил китайские, индийские и особенно персидские государства. По его определению, «персы являются первым историческим народом». Кстати, говоря об Иране и Ближнем Востоке, Гегель несколько раз упоминает Армению, в том числе царя Армении Тиграна Великого. А среди европейских государств и народов он выделяет германские народы, может быть, из-за тенденции к

национальному почитанию, рассматривая их как «дух нового мира», духовно вскормленный богатой греко-римской культурой, быстро ассимилировавший свою духовную культуру и материальные ценности, в которые Священная Римская Империя привнесла дух и качество. И в самом конце своих лекций по философи истории Гегель обращается к рассмотрению пережитого им исторического этапа, включавшего период Великой Французской революции.

В целом философской системе Гегеля свойственен диалектический метод истолкования природы, мира, человеческих и социальных явлений с историческими закономерностями и, с другой стороны, объективный идеализм и идея абсолютного духа. Через его труд красной нитью проходит разработанный автором диалектический метод.

Для Гегеля идея свободы проявляется в человеческом сознании как дух в различных его проявлениях: человеческом, индивидуальном, национальном, природном, всеобщем, глобальном, абсолютном и т.д. Самое ценное в духе, изображенном Гегелем - это реализация идеи свободы человеческим мышлением и сознанием, которая ведет мир и человечество по пути закономерного прогресса.

По Гегелю, конечной целью абсолютного духа и воли является осуществление свободы посредством разума и стремления к ее достижению, ведущих к прогрессу саму природу, мир, человечество. В этом заключался философский смысл гегелевской формулировки истории.

Исторический прогресс – это достижение и реализация свободы человеческим духом. Согласно гегелевской философии духа, развитие духа проходит от одного уровня к другому, что само по себе предполагает развитие человека, государств, народов, мира вообще и всемирной истории. В природе и в мире работают интеллект и мышление человека, посредством которых мы рассматриваем и изучаем явления и процессы окружающего мира.

И одним из самых эффективных и надежных инструментов для достижения этой цели является опыт, потому что это самый простой и наглядный способ открытия законов. В своей книге Гегель попытался дать целостную и законченную картину Всемирной истории, понять ее как единый процесс постепенного движения и развития от низших форм к высшим и более совершенным. Излагая историю народов мира, он считал, что каждая нация, личность, государство имеет вершину своего исторического призвания, как бы звездный час, после достижения которой сходит со сцены истории, уступив место другому.

# Օգտագործված գրականություն


1. **Բերդյան Ն.**, Պատմության իմաստը (թարգմ. Դ. Մոսինյանի), Եր., «ՎՄՎ-պրինտ» հրատ., 2019:
2. **Եփրեմյան Տ.**, Ազգերի ինքնորոշման իրավունքի պատմական հետագիծը, «Վէմ», Եր., 2016, N 4 (հոկտեմբեր-դեկտեմբեր), էջ 15:
3. **Զաքարեայ Սարգաւագի** Պատմագրութիւն, մաս II, Վաղարշապատ, 1870:
4. **Լենին,** Երկեր, 4-րդ հրատ., Եր., «Հայաստան» հրատ., 1962:
5. **Լեո**, Հայկական հարցի վավերագրերը, Եր., ԵՊՀ հրատ., 2014:
6. **Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ)**, հատ. 6, Եր., 1980:
7. **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Եր., «Հայկ ՍՍՀ ԳԱ» հրատ., 1986
8. **Նժդեհ Գ.**, Հատընտիր, Եր., «Ամարաս» հրատ., 2006:
9. **Շանթ Լ.**, Երկեր, Եր., «Սով. Գրող» հրատ., 1989:
10. **Սարգսյան Ա.**, Փիլիսոփայության դասընթաց, Եր., «Տնտեսագետ», 2010:
11. **Սվետոնիոս Գ.**, Տասներկու Կեսարների կյանքը, Եր., «Հայաստան» հրատ., 1986:
12. **Гегель Г**., Лекции по философии истории, изд. 2-е, перевод **А. М. Водена**, СПб, «Наука», 2005.
13. **Гегель**, Сочинения, т. VIII, М.-Л., «Гос. издать», 1935.
14. **Гегель Г**., Философия права, М., . изд. АСТ ,2023.
15. **Гегель Г.,** Философия истории // https://mybook.ru/author/fridrih-gegel/filosofiya-istorii/citations/?page=2 (03. 04. 24).
16. **Дройзен И. Г**., Историка, СПб, «Вл. Даль», 2004.
17. **История философии (энциклопедия)**, Мн., Интерпрессервис; Книжный Дом., 2002.
18. **Каримский А. М**., Философия истории Гегеля, М., МГУ, 1988.
19. **Моммзен Т**., История Рима, т. 3, М., «Гос. изд.», 1941.
20. **Новейший философский словарь**, изд. 3-е, Минск., «Книжный Дом», 2003.
21. **Фукуяма Фр**., Конец истории и последний человек, «Вопросы философии», М., 1990, N 3.
22. **Фукуяма Фр**., Конец истории и последний человек, М., «Ермак», 2005.


# REFERENCES


1. **Berdyayev N**., Patmut'yan imastĕ, t'argm. D. Mosinyani, Yer., "VMV-print", 2019, (**In Armenian**)
2. **Ep'remyan T**., Azgeri inqnoroshman iravownqi patmakan hetagic'y', "Ve'm", Er., 2016, N 4 (hoktember-dektember) (**In Armenian**)
3. **Zak'areay Sargavagi** Patmagrut'yun, mas II, Vagharshapat, 1870, (**In Armenian**)
4. **Lenin**, Yerker, 4-rd hrat., Yer., "Hayastan" hrat., 1962, (**In Armenian)**
5. **Leo**, Haykakan harts'i vaveragrerĕ, Yer., YePH hrat., 2014, (**In Armenian**)
6. Haykakan sovetakan hanragitaran (HSH), hat . 6, Yer., 198 (**In Armenian**)
7. **Herodotos**, Patmut'yun, inĕ grits', t'argm. S. Krkyasharyani, Yer., Hayk. SSH **"**Gitut'yun" hrat., 1986 (**In Armenian)**
8. **Nzhdeh G**., Haty'ntir, Yer., "Amaras" hrat., 2006 (**In Armenian**)

9. **Shant‘ L**., Yerker, Yer., “Sov. Grogh” hrat., 1989 (**In Armenian**)
10. **Sargsyan A.,** P‘ilisop‘ayut‘yan dasynt‘ats‘, Yer., **“**Tntesaget” hrat., 2010 (In Armenian).
11. **Svetonios G**., Tasnerku Kesarneri kyank‘ĕ, Yer., **“**Hayastan” hrat., 1986 **(In Armenian)**
**“Vem**», Yer., 2016, t’iv 4 (hoktember-dektember) **(In Armenian)**
**12. Gegel‘ G.,** Lekcii po filosofii istorii, izd. 2-e, perevod A. M. Vodena, SPb, «Nauka», 2005.
13. **Gegel‘**, Sochineniya, t. VIII, M.-L., **“**Gos. izdat‘”, 1935 **(In Russian)**
**14. Gegel‘ G**., Filosofiya prava, M., 1990 **(In Russian)**
15. **Gegel‘ G.**, Filosofija istorii // https://mybook.ru/author/fridrih-gegel/filosofiya-istorii/citations/?page=2 **(In Russian)**
16. **Droyzen I. G**., Historika, SPb, izd. “VL. Dal‘”, 2004 (**In Russian**)
17. **Istoriya filosofii** (jentsiklopedija), M., 2002 **(In Russian)**
18. **Karimskiy A. M**., Filosofiya istorii Gegelya, M., izd. MGU, 1988, **(In Russian)**
19. **Mommzen T.,** Istoriya Rima, t. 3, M., “Gos. Izd.”, 1941 **(In Russian)**
20. **Noveyshiy filosofskiy slovar'**, izd. 3-ye, Minsk., izd. “Knizhnyj Dom», 2003 (**In Russian)**
21. **Fukuyama Fr**., Konets istorii i poslednij chelovek, izd. **“**Voprosy filosofii”, M. 1990, N 3 **(In Russian).**
22. **Fukuyama Fr**., Konets istorii i posledniy chelovek, M., “Yermak”, 2005, (**In Russian**)